Երբ մարդուն ասում ենք շիզոֆրենիկ կամ պսիխոպատ, առաջին հերթին վիրավորում ենք այն մարդկանց, ովքեր տառապում են նման խնդիրներով: Շիզոֆրենիան բավականին ծանր հիվանդություն է, որն առաջին հերթին կապված է իրականությունն ընկալելու հետ: Նման մարդիկ տեսիլքներ, խանգարումներ են ունենում, զառանցում են հաճախ:

Կարդացեք՝ էջ 4

Նիկոլ Փաշինյանը եթե ոչ մեկին չի կզզացնում, չի սատկացնում, այլ սպառնալիքներ չի տեղում, չի գոռում՝ «ինչու ես դու կենդանի, ինչու չես զոհվել խրամատում», ապա դա չի նշանակում, որ մեր օրը հանգիստ ու անհոգ է անցնում: Նա գոռգոռոցից ազատ օրերին ավելի վատ բան է անում... վտարում է հային հայկական լեռնաշխարհից:

Կարդացեք՝ էջ 5

Քարոզարշավը չպետք է այն մասին լինի, թե ով ում ինչքան է ատում: Ատելության դրսեւորումներին մենք ականատես ենք 2018-ից ի վեր: Բայց քանի որ Փաշինյանն արդեն 8 տարի իշխանության է, իր ոչ մի խոստմանը տեր չի եղել, ուստի պետք է քարոզարշավն իջեցնի փողոցային մակարդակի, վիրավորանքներ տա, մտնի ընտանիքներ:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 81 (4216), 21 մայիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Ալեն Սիմոնյանն օրերս Նիկոլ Փաշինյանին ներկայացրել է ՔՊ-ականների շրջանում տիրող իրարամերժ տրամադրությունները եւ մտահոգությունները: Ասել է, որ ՔՊ-ի ներսում մտահոգված են Փաշինյանի չափազանց հուզականությամբ, վտանգավոր հայտարարություններով: Նրանք՝ բոլորը, իհարկե, շատ են ցանկանում խորհրդարան անցնել, իշխանություն լինել, սակայն սկսել են կասկածել ու վախենում են, որ իրենց առաջնորդի սխալները կարող են խոչընդոտել դրան, քանի որ ՔՊ-ի դիրքերը «նախկինի պես ամուր չեն»: Փաշինյանն իրեն բնորոշ ոճով պատասխանել է, որ նրանք ոչինչ չեն հասկանում, «ինքը գիտի՝ ինչ է անում», եւ հավելել է. «Դրանց ասա՝ թող իրենց աշխատանքը կատարեն՝ ըստ պլանի, իրենց գործը չի, թե ես ինչ եմ անում ու ասում»: Ընդհանուր առմամբ, իհարկե, ՔՊ անդամները վստահ են հաղթանակի մեջ, սակայն վերջերս կասկածներ են ծագել: Նրանք իրար մեջ խոսում են, որ «Փաշինյանը սրում է խաղը... անհաջողության դեպքում նոր իշխանությունն ու ժողովուրդը մեզ «խժռելու» են՝ հատկապես արցախցիների եւ Եկեղեցու վրա հարձակումների համար»:

Նախօրեին Երեւանի ավելի քան 15 հասցեում իրականացված խուզարկությունները կատարվել են նաեւ արցախցիների տներում: Մեր աղբյուրները հայտնում են, որ իշխանությունների թիրախում են հատկապես ակտիվ արցախցիները, որոնք այս շրջանում նախընտրական գործընթացներին են ներգրավված, աշխատում են ընդդիմադիրների շտաբներում: Արցախցիները կասկած չունեն, որ իբր արցախցիների մասնակցությամբ այդ «մասկի շոուն», որը հունից հանել էր Նիկոլ Փաշինյանին, իշխանությունները բեմադրել են՝ նախեւառաջ արցախցիների շրջանում ռեյդ իրականացնելու եւ ակտիվ, եղանակ փոխող մարդկանց ձերբակալելու նպատակով:

Քաղաքացիների հետ շփումներից պարզեցինք, որ հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնները վերջին օրերին իրենց անցկացրած սոցհարցումների ժամանակ պարտադիր ներառում են հետընտրական զարգացումների հարցը եւ ճշտում են՝ արդյո՞ք մարդիկ կմասնակցեն այդ պրոցեսներին: Մասնավորապես, եթե ՔՊ-ն վերընտրվի, իսկ ընդդիմությունը փողոցային պայքար սկսի, կմասնակցե՞ք արդյոք դրան, թե՞ համարելու եք, որ ամեն ինչ վերջացած է: Թե որ շրջանակներն են փորձում հանրային այդ տրամադրությունները շոշափել, դժվար է ասել, սակայն այս փաստն ինքնին հուշում է, որ հունիսի 7-ով ընտրական գործընթացները չեն ավարտվելու:

Մարտեր՝ առանց կանոնների

2020 թվականի պատերազմի ժամանակ ՔՊ-ական իշխանությունն այսքան կենաց-մահու կռիվ չէր տալիս մեր թշնամու դեմ, ինչպես հիմա պայքարում է ընդդիմության դեմ՝ ընտրական ճակատամարտում հաղթելու համար: Այն կռվում զգուշավոր էին՝ թշնամու նավթամուղ-գազամուղներին չէին հարվածում, բնակավայրերը չէին ռմբակոծում (մեկ բացառությամբ՝ երբ սխալմամբ Կիրովաբադին խփեցին), ագրեսիվ լեքսիկոն չէին կիրառում: Հիմա այլ է իրավիճակը՝ բոլոր մեթոդներն ընդունելի են ու կիրառելի: Հարվածում են ամենացավոտ տեղերին, մտնում են ընտանիքներ, կեղծիք են տարածում, խոստանում են «սատկացնել», «կզզընցնել», «ոչնչացնել»: Իսկ իրավապահ համակարգը, որը «Փաշինյանին սպասում եմ Շենգավիթ համայնքում» արտահայտությունը համարել է բռնության սպառնալիք, իսկ «սիկտիր» բառը՝ ատելության խոսք, այս արտահայտությունների մեջ ոչ բռնության հանցակազմ է տեսնում, ոչ ատելության խոսք, ոչ անհանդուրժողականություն, ոչ քարոզարշավի խոչընդոտում: Բայց բոլոր սանձերն արձակած իշխանության վարքն այլեւս տարօրինակ չէ, ոչ էլ նրա սպասարկու իրավապահների՝ այս «մահապարտի» կեցվածքն է տարակուսելի: Ավելի շատ զարմանում եմ ընդդիմության պահվածքի վրա: Եթե մենք նորմալ, համարձակ եւ գործունյա ընդդիմություն ունենայինք, հիմա իրավական ատյանները՝ դատախազությունը, քննչականը, դատարանները, պետք է հեղեղված լինեին հայցերով: Սրանք ուղղակի չպետք է աչք բացեին հայցերի տարափից: Եթե մեր ընդդիմությունը մի քիչ վճռական լիներ, պետք է հիմա մարդկանց փողոց հանած լիներ: Դուրս չե՞ն գալիս՝ իրենք դուրս գային: Մեկ-երկու՝ շարքերը կավելանային, հանրությունը կակտիվանար, նախընտրական մթնոլորտ կձեւավորվեր եւ իշխանափոխության պահանջ: Իսկ այս իներտության, քվեարկության օրվա սպասման մեջ շահում է նա, ով ավելի ագրեսիվ է:

Ռուսաստանի իշխանական շրջանակները սկսել են լուրջ վերաբերվել Հայաստանում իրենց դեմ ծավալվող, այսպես կոչված, հիբրիդային պատերազմի, ՌԴ-ի եւ Պուտինի դեմ շրջանառվող տեղեկություններին, որոնք հիմնականում տարածվում են իշխանական եւ իշխանամերձ շրջանակների կողմից: Մեր տեղեկություններով, հայաստանյան հայտնի սիթքոմներից մեկի իշխանական դերասանի հակապուտինյան հարցազրույցներից ու հայտարարություններից հետո Ռուսաստանում գտել են այս դերասանի բիզնեսմեն ազգականին եւ նախազգուշացրել, որ եթե շարունակվեն այդ հայտարարություններն ու հարցազրույցները, ապա իր գործունեությունը եւ ՌԴ-ում կեցությունը կդառնան օրերի հարց:

ՊԱՏՃԱՌԸ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՌԵՅՏԻՆԳԻ ԱՃՆ Է

Նիկոլ Փաշինյանի՝ վերջին օրերի անհավասարակշիռ պահվածքի պատճառը, ըստ ՔՊ-ական մեր աղբյուրների, ընդդիմության նկատմամբ հանրային դրական վերաբերմունքի աճն է, հատկապես՝ գործարար Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստանի» ռեյտինգի աճը: Հենց սրանով է պայմանավորված այն սեւ փիառը, որն իրականացվում է Սամվել եւ Նարեկ Կարապետյանների դեմ, այդ թվում՝ ռուսալեզու կայքում հրապարակված նյութերի տեսքով, որոնք հերքվել են Կարապետյանների կողմից: Խոսքն այն մասին է, որ Նարեկ Կարապետյանը ՌԴ քաղաքացի է եղել, իսկ Սամվել Կարապետյանը՝ ռուսական հատուկ ծառայությունների աշխատակից: Նիկոլ Փաշինյանը քարոզարշավի երկու շաբաթների ընթացքում, ասում են՝ զգում է, որ հողը ոտքերի տակից փախչում է, նրան հանգիստ չի տալիս իր մրցակիցներին ընտրապայքարից դուրս թողնելու միտքը, եւ նման հրապարակումներով եւ ընտրակաշառքի սարքովի մեղադրանքներով փորձում են հիմքեր ձեւավորել «Ուժեղ Հայաստանի» գրանցումը կասեցնելու համար: Սակայն իշխող թիմում ոչ բոլորն են կորցրել սթափ մտածողությունը եւ կարծում են, որ Սամվել Կարապետյանին խաղից դուրս թողնելն իրենց չի ներվի, եւ այդ դեպքում արդեն ժողովուրդն իրոք փողոց դուրս կգա, ու անցանկալի զարգացումներ կլինեն, Արեւմուտքն էլ երես կթեքի իրենցից:

ԿԱՇԱՌՔ

Նիկոլ Փաշինյանն իր բոլոր նախընտրական հանդիպումների ժամանակ հավետով փչում է անվճար բուժօգնության, ծրի դեղորայքի փուչիկները: Երեկ էլ, անցնելով Երեւանի թաղերով, կտրված ձայնով գոռում էր, թե 65+ քաղաքացիները պետության կողմից անվճար բուժօգնություն են ստանում, անվճար վիրահատվում են, եւ որ նման բան նախկինում չի եղել:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan
@hraparak.am

Բոլոր հանդիպումների ժամանակ նա, պատեհ-անպատեհ, մարդկանց աչքն է մտցնում առողջության ապահովագրությունը՝ այն ներկայացնելով որպես իր իշխանության մեծագույն լավություն, կարծես ինքն ու իր ՔՊ-ականներն են անձնական գրպանից վճարում դրա համար:

Մենք փորձեցինք պարզել, թե ինչ վիրահատությունների մասին է խոսքը, համընդհանուր ապահովագրության շրջանակում քանի վիրահատություն է կատարվել, եւ ինչ կա թաքնված Նիկոլի նախընտրական հավաստիացումների տակ: Առողջապահության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի տվյալներով, համակարգի ներդրումից ի վեր, այսինքն՝ 100 օրում, իրականացվել է 68 հազար վիրահատություն: Այս թիվն ինքնին զարմանալի է: Հավանաբար, այս 68 հազար վիրահատությունների մեջ են մտնում նաեւ տարրական միջամտությունները, ասենք, խալերի հեռացումը կամ մատից փուշ հանելը: Դիմեցինք մասնագետների: «Առողջության իրավունք» ՀԿ նախագահ **Անուշ Պողոսյանը** վստահեցրեց, որ այս 68 հազարը պետք է ստուգվի, քանի որ նույն առողջապահության նախարարը, օրինակ, սխալ էր ներկայացրել արտահիվանդանոցային այցելությունների թիվը, որից հետո ուղղել են իրենց սխալը եւ ներողություն խնդրել: «Իրենք վերլուծություն չեն անում եւ ահասարսուռ թվեր են հրապարակում նախընտրական շրջանում, բայց այդ թվերը եթե փորձում ես վերլուծել, ակնհայտ է դառնում, որ առողջապահությունն իր նույն հունով գնում է, գուցեեւ՝ ոչ այնքան արագ, նախկինի համեմատ»:

Այս 68 հազարի մեջ, ըստ փորձագետի, մտնում են ոչ միայն անվճար վիրահատությունները, այլեւ համավճարով արված վիրահատությունները, որոնց քանակը մեծ է, եւ որոնք այս կամ այն չափով ֆինանսավորվում են բուժառուների կողմից: «Բացի դա, պետք է նաեւ որակի առումով վերլուծություն անել, համեմատել այս թվերը հանրապետության վիրաբուժական բաժանմունքների մահճակալների ֆոնդի հետ եւ հասկանալ, թե մահճակալների ծանրաբեռնվածությունը որքան է, ու խոսել որակի մասին: Բազմաթիվ ահազանգեր ունենք, որ այնքան շատ են վիրահատություններն իրար հետեւից մտցնում, որ անտիսեպտիկայի, ասեպտիկայի մասին խոսք լինել չի կարող: Մարդիկ խուճապահար դիմում են իրենց խնդիրներով՝ մտածելով, որ ամսի 7-ից հետո չի լինելու այդ ապահովագրությունը, եւ փորձում են, քանի կա այս հնարավորությունը, օգտվել դրանից, անգամ՝ համավճարով: Իհարկե, մարդկանց պետք է հորդորել, որ քանի դեռ կա, թող օգտվեն, բայց առողջապահական կոմպոնենտը եթե հաշվի առնենք, սա խնդրահարույց թիվ է ու բերելու է եւ վիրաբույժների մասնագիտական այրման, եւ բարդությունների, որոնք լինում են վիրահատություններից հետո: Օրինակ, երկրորդական կպումով վերքեր: Հայտնի Նեսոյի քարաբաղնիսի մասին է խոսքը, որ ասում է, թե ինչքանը փրկվեցին, ու հետո՝ թե քանի-քանի հոգի են խեղդվել քարաբաղնիսից»,- ասում է Անուշ Պողոսյանը:

Նա հաստատում է՝ այո, այս 68 հազարի մեջ մտնում են նաեւ այնպիսի վիրահատություններ, որոնք ամբուլատոր են եղել՝ պոլիկլինիկաներում, ասենք՝ խալերի հեռացումները, թեթեւ ակնաբուժական վիրահատությունները, որոնց դեպքում հիվանդը նույն օրը գնում է տուն:

Անուշ Պողոսյանի համար այս 68 հազար թիվը տեղի ունեցող «կատաստրոֆայի» վկայությունն է: «Եթե 100 օրում այսքան վիրահատության կարիք կար, ապա 8 տարի էս մարդիկ ո՞նց են ապրել: Ի վերջո, նոր չեն իրենք եկել իշխանության: Իսկ ինչո՞ւ 8 տարի, եթե այս մարդիկ իրոք կարիք ունեին վիրահատության, չեն արվել, ի՞նչ է եղել նրանց ճակատագիրը»,- հարցնում է «Առողջապահության իրավունք» ՀԿ ղեկավարը:

ՔՊ-ական իշխանությունն այնպես է ներկայացնում, կարծես իրենցից առաջ անապատ է եղել երկրում՝ ոչ մի անվճար բուժօգնություն չի եղել առհասարակ: Բայց անվճար բուժօգնություն եւ պետպատվերի շրջանակներում վիրահատություններ միշտ էլ արվել են:

«Երբ որ 2014-2015 թվականներին ներդրվեցին «կյանք փրկող ծրագրերը»՝ սրտի անհետաձգելի վիրահատությունները, ուղեղի, արյան շրջանառության հետ կապված ծրագիրը, այն ժամանակվա նախարարները պարզապես կամերայով չէին գնում մտնում հիվանդանոցներ՝ առանց արտահագուստի, ու հարցնում՝ լա՞վ եք, բուժվե՞լ եք եւ այլն: Այո, դրանք միշտ եղել են, գուցե տարեցտարի են ծավալները մեծացել, բա դրա համար էլ խոսում ենք զարգացման մասին»,- ասում է փորձագետը՝ շեշտելով, որ այդ ամենն արվում է ոչ թե որեւէ մեկի բարեգործությամբ, այլ Հայաստանի Հանրապետության քաղաքացու մուծած հարկերի հաշվին:

Չմոռանանք նաեւ ապահովագրության միջոցներով վիրահատվողների ահռելի հերթերի մասին, որոնց դիմանալու հնարավորություն եւ առողջություն ոչ բոլորն ունեն: «Իրենք օրենքով դրել են ժամկետ՝ 6 ամիս, որ կարող են հերթագրված մնալ: Կարծում եմ՝ ընտրություններից հետո մարդիկ ավելի երկար կսպասեն, քանի որ այս պահին ապահովագրությունն օգտագործվում է որպես ընտրական պրոցեսի մաս»,- նշեց Անուշ Պողոսյանը: Իսկ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը, օրինակ, կարծում է, որ հուլիս-օգոստոսից այս ծրագրի իրականացումը կասեցվելու է, որովհետեւ բյուջեում փող չկա՝ այն շարունակելու համար:

ՍԵՐԳԵՅ ՇՈՅԳՈՒՆ ՎԵՐՑՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՔՆՆԱԴԱՏԵԼՈՒ ԷՍՏԱՖԵՏԸ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մինչ Նիկոլ Փաշինյանը փորձում է շարունակել լարախաղացությունը՝ Եվրոպական Միության, ԱՄՆ-ի, Ադրբեջանի, Թուրքիայի, ՌԴ-ի միջեւ, ռուսական կողմը կոշտացնում է վերաբերմունքը: Հատկապես սուր են արձագանքում մայիսի սկզբին Երեւանում կայացած ԵՄ գագաթնաժողովի ժամանակ հնչած կոշտ հակառուսական հայտարարություններին եւ դրա ֆոնին Նիկոլ Փաշինյանի քայլերին: Նախ՝ ՌԴ նախագահը Հայաստանից հստակեցում պահանջեց՝ պնդելով, որ պետք է ընտրություն կատարել ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի միջեւ եւ սկսել «խաղաղ ապահարզանի» գործընթաց, եւ անգամ խորհուրդ տվեց հանրաքվե անել, որ հայ ժողովուրդը որոշի: Նիկոլ Փաշինյանը մայիսի 20-ին հայտարարեց, որ Վլադիմիր Պուտինի հետ ունի խիստ ջերմ հարաբերություններ: Նա դեռ հինգ տարի առաջ էր հայտարարել, որ ՌԴ նախագահին իր ընկերն է, իսկ երեկ հայտարարեց. «Հայաստանը Ռուսաստանի հետ հարաբերություններում ոչ մի կտրուկ գործողություն չի ձեռնարկելու: Ես կասկածում եմ, որ 2018 թվականից մինչ օրս ՌԴ նախագահն ավելի շատ կոնտակտներ որեւէ այլ լիդերի հետ ունեցել է: Այս ընթացքում մենք մոտ 200 հեռախոսազրույց ենք ունեցել»: Փաշինյանն ընդգծել է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները շատ ջերմ են, բայց պրոբլեմն այլ տեղ է. «Ընդդիմությունն ասում է՝ Ռուսաստանի հետ հավասարը հավասարի հետ հարաբերություններ, ժողովուրդ ջան, հումորը՝ հումոր, բայց հումորն էլ... Ռուսաստանը գերտերություն է, ու ՌԴ-ին պետք է վերաբերվել հարգանքով, ակնածանքով, ու ես այդպես էլ վերաբերվում եմ»: Փաշինյանը նաեւ նշել է, որ Հայաստանը Ռուսաստանի շահերը վնասելու համար երբեք չի արել ու չի անի ոչինչ: «Բայց, կներեք, մենք չենք կարող Ռուսաստանի շահին ավելի բարձր վերաբերվել, քան՝ Հայաստանի շահերին»,- հավելել է նա՝ խոստանալով, որ Ռուսաստանի հետ բարձր մակարդակի երկխոսությունը շարունակվելու է:

Իսկ Մոսկվան ժամանակ է տվել, որ այս ամսվա վերջին Աստանայում կայանալիք ԵԱՏՄ գագաթնաժողովում պետք է Հայաստանի անդամակցության հարցը որոշվի: «Մենք չենք ցանկանում, որ Հայաստանը լքի ԵԱՏՄ-ն, բայց եւ տեսնում ենք այն խնդիրները, որոնք կծագեն ԵՄ-ին միանալու կամ այդ դաշինքի հետ հարաբերությունները սերտացնելու դեպքում»,- ՏԱՍՍ-ի հետ զրույցում ասել է Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը՝ ընդգծելով, որ այդ խնդիրները «գործնականում արդեն իսկ ծագում են»: Հայտնի է նաեւ, որ Նիկոլ Փաշինյանը չի մեկնելու Աստանա՝ ԵԱՏՄ հերթական նիստին, մեկնելու է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Լուրեր կան, որ Գրիգորյանին կարող են թույլ չտալ գլխավոր սեղանի մոտ նստել, քանի որ նրա կարգավիճակը դա թույլ չի տալիս: Ըստ ամենայնի, նա նաեւ լիազորված չի լինի Հայաստանի կողմից համապատասխան որոշումը բարձրաձայնելու հարցում: Իսկ «Մոսկվան արցունքների չի հավատում» եւ արագացնում է գործընթացները: Երեկ կայացել է Ռուսաստանի Անվտանգության խորհրդի հատուկ աշխատանքային խմբի նիստ, որի ժամանակ Հայաստանի հասցեին աննախադեպ ծանր մեղադրանքներ է հնչեցրել ՌԴ Անվտանգության խորհրդի նախագահ Սերգեյ Շոյգուն:

«Հայաստանի ղեկավարության վերջին քայլերը հակասում են Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններին»,- ասել է Սերգեյ Շոյգուն: Նրա խոսքով՝ Հայաստանի իշխանությունը վերջերս մի շարք քայլեր է ձեռնարկել, որոնք անհամատեղելի են Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների հետ: Այս ամենը փոխանցում է ռուսական պետական ՏԱՍՍ գործակալությունը: Մայիսի 7-ին էլ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Մարիա Զախարովան էր հայտարարել, որ Հայաստանի իշխանությունները չեն կատարել Ռուսաստանի շահերին հակասող քայլեր չձեռնարկելու իրենց խոստումը: Շոյգուն այս հայտարարությունն արել է՝ անդրադառնալով մայիսի 4-5-ին Երեւանում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի եւ Հայաստան-ԵՄ գագաթնաժողովներին: Զախարովան ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ Հայաստանը ջերմորեն է ընդունել Ռուսաստանի թշնամի Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկուն, որը Երեւանում կայացած միջոցառման ժամանակ սպառնացել է անօդաչու թռչող սարքով հարված հասցնել Մոսկվայում կայանալիք հաղթանակի օրվա շքերթին: Ռուս բարձրաստիճան պաշտոնյաների պնդմամբ՝ մայիսի 11-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Երեւանը չի ձգտում վնասել Ռուսաստանի շահերին եւ մտադիր է շարունակել զարգացնել հարաբերությունները Մոսկվայի հետ, սակայն, ըստ Զախարովայի, Փաշինյանի հայտարարություններն ու գործողությունները հակասում են իրար, եւ իրականությունը լրիվ այլ բան է հուշում:

Ինքնաբացարկների շքերթը շարունակվում է

ԱԺ ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած «Բոլորին դեմ եմ» կուսակցության անդամները ռեկորդային թվով ինքնաբացարկներ են ներկայացրել՝ ցուցակի 87 թեկնածուից 50-ը ինքնաբացարկ է հայտնել: «Հրապարակ»-ի հետ զրույցում կուսակցության ընտրական ցուցակի 5-րդ համար Միքայել Նահապետյանն ավելի վաղ հայտնել էր, որ այս պրոցեսում մարդկանց պատգամավոր դառնալը չէ, որ հետաքրքրում է: «Մենք ի սկզբանե հայտարարել ենք, որ կոնկրետ խնդիր ենք լուծում. մեր ցուցակի անդամները մեր առաջ քաշած ռեֆորմները կյանքի կոչելու ճանապարհին կոնկրետ ֆունկցիա ունեն՝ ԱԺ անցնելու դեպքում քվեարկեն մեր առաջ քաշած 3 օրենքների փոփոխությանը՝ ապահովելով արտահերթ ընտրությունների նշանակումը»:

Նշենք, որ քաղաքական ուժերը ԿԸՀ նախընտրական ցուցակ ներկայացնելիս պետք է ցուցակում ներառված ունենան նվազագույնը 80 թեկնածու, իսկ առավելագույնը՝ 300: Սակայն քաղաքական ուժի գրանցումից հետո այլեւս էական չէ, թե քանի թեկնածու ինքնաբացարկ կհայտնի: Այսինքն՝ ինքնաբացարկները հիմք չեն կարող լինել, որ քաղաքական ուժի գրանցումը անվավեր ճանաչվի:

ՏԱՊԱԼՎԱԾ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ, ԵՐՋԱՆԿԱՑԱԾ ՍՏԱՄՈՔՍ

ՏԱՇԻՐ

Անախորդ երկու օրերին Նիկոլ Փաշինյանն ու իր խմբակը քարոզարշավը շարունակեցին Լոռվա մարզում: Չնայած ՔՊ-ականները լայվեր ու տեսանյութեր են տարածում Լոռիում իրենց «ջերմ ու սիրալիր» ընդունելության մասին, սակայն մարզից տեղեկություններ են հասնում, որ Փաշինյանին ու իր խմբակին բառի ամենաուղիղ իմաստով մերժել են, եւ քարոզարշավը բարի էր թերեւս միայն Նիկոլ Փաշինյանի ստամոքսի համար. Լոռվա մի քանի համայնքներում ՔՊ-ականներն իրենց շեֆին լավ պատիվ տվեցին, երեկ Թումանյան համայնքում Փաշինյանը կես կաթսա գառան խաշլամա ոտքի վրա կերավ, հետեւից էլ՝ մեղր, թթու, հալվա, թթվասեր, բոլորը խառնեց իրար ու մոռացավ քարոզարշավի, տեղացիների հետ շփման մասին եւ անկեղծորեն խոստովանեց, որ բնակիչների հետ շփվելու ժամանակն օգտագործեց խաշլամա ուտելու վրա:

Լոռիում, ինչպես ավելի վաղ հայտնել ենք, իշխանության դիրքերն ամենախարխուլն են, Լոռին համարվում է ամենաընդդիմադիր մարզը, որտեղ նաեւ աղքատությունն է բարձր: Գուցե ՔՊ-ի ցածր ռեյտինգը պայմանավորված է նաեւ նրանով, որ բարերար Սամվել Կարապետյանի Տաշիրը Լոռվա մարզի մի մասն է, եւ, տեղացիների հավաստմամբ՝ այստեղ ամեն բնակավայրում նա ներդրումներ է արել, կառուցապատել: Իսկ վերջին դեպքերից՝ տաշիրցիների կալանավորումներից հետո իշխանության նկատմամբ վերաբերմունքն ավելի է սրվել: Մի քանի օր առաջ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Տաշիրում միայնակ՝ առանց Փաշինյանի, քարոզարշավի ընթացքում սադրեց Կարապետյանի թիմակիցներին եւ 10 երիտասարդի բռնել տվեց: Նրանք արդեն քանի օր է՝ կալանավորված են՝ ՔՊ քարոզարշավը խոչընդոտելու, Պապիկյանի առջեւ ճանապարհը փակելու շինծու մեղադրանքով:

Այդ տհաճ միջադեպից հետո Փաշինյանն ու թիմը փորձեցին տպավորիչ տեսարաններ ցուցադրել՝ ցրելու այն տպավորությունը, թե Լոռիում տոտալ մերժում են իրենց, սակայն անցած երկու օրերի քարոզարշավի ընթացքում, կարելի է ասել, չհաջողեցին: Մենք նախօրեին գրել էինք, որ Տաշիրի կիսադատարկ հրապարակում է կայացել ՔՊ-ի հանրահավաքը, սակայն պարզվեց՝ հրապարակ չեն էլ հասել, այլ կեսճանապարհին են հավաքն արել. Փաշինյանը բարձրացել է պիկապի վրա, ելույթ ունեցել: Եվ այս ամենը նորից խոսում է ձախողման մասին, ինչից էլ առաջացել է վարչապետի թեկնածուի նյարդային վիճակը:

Մինչդեռ ՔՊ-ում ծրագրած են եղել Տաշիրի սրտում մեծ քարոզարշավ անել, Երեւանից ավտոբուսներով մասսովկա են իրենց հետ տարել, նախապես սանրել են հրապարակը՝ շնորով զննել տարածքը, բայց հասկանալով, որ խայտառակվելու են, քաղաքի փողոցներից մեկում են մինի հավաք անցկացրել, որին հաշված թվով տեղացիներ են մասնակցել՝ 300-500 մարդ, մեծ մասը՝ իրենց հետ բերվածները:

Տաշիրի բնակիչ, կալանավորված տղաներից Էդգարի կինը՝ Անին, երեկ մեզ պատմեց, որ ինքը Նիկոլ Փաշինյանի հավաքի ժամանակ տնից թողել գնացել է այնպիսի տեղ, որ չլսի նրա ձայնը, չտեսնի նրանց: Նա չցանկացավ խոսել ամուսնու գործից: Զարմացած էր, թե ինչպես էր Փաշինյանն ուզում Տաշիրի հրապարակում հանրահավաք անել, որտեղ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի գրասենյակն է, եւ ամեն բան կառուցված է Կարապետյանների ջանքերով: Ասաց՝ լսել է, որ իր հայրենի քաղաքից քչերն են մասնակցել Փաշինյանի քարոզարշավին:

Շահնազար, ներկայիս Մեծավան գյուղում էլ է ՔՊ-ն խայտառակվել, Պապիկյանի հետ բախման արդյունքում ձերբակալվածների մեծ մասն այս համայնքից է: Մեզ պատմեցին, որ գյուղապետը տնետուն շրջել է եւ գյուղից ընդամենը հինգ մարդու է համոզել, որ Փաշինյանի հավաքին ներկա գտնվեն: Պատմեցին նաեւ, որ կալանավորված տղաների հարազատները փորձել են խմբով գնալ Փաշինյանի դեմ ակցիա անելու, սակայն գյուղացիները հետ են պահել այդ մտքից՝ վախենալով, որ նրանց էլ կտանեն տղաների մոտ:

Փաշինյանի հավաքին ներկա գտնվածներից մեկը համայնքի վարչական ղեկավար, ոչ ՔՊ-ական **Հովիկ Մարկոսյանն** է եղել, որ սկզբում դժվարացավ հիշել, թե երբ է Փաշինյանը գյուղ այցելել, հետո վստահեցրեց, որ մասնակցել է հավաքին: «Ինչ նշանակություն ունի՝ մեր երկրի վարչապետն ա, եկել խոսել ա, ես էլ լսել եմ»,- ասաց նաեւ, վստահեցրեց, որ չի հաշվել՝ գյուղից քանի մարդ է մասնակցել: «Մեկ-մեկ դեմքերով չգիտեմ, բայց երեւի սակավաթիվ չէին»: Հարցրինք՝ որպես վարչական ղեկավար, իր կալանավորված համագյուղացիների հարցը չի՞ բարձրաձայնել: «Չէ, ինչ խոսեմ»: Համարում եք, որ արդարացի՞ են կալանավորել: «Ես ոչ մի բան չեմ համարում, իրան մոտիկ չեմ գնացել, կանգնած եմ եղել ժողովրդի մեջ ու լսել եմ»: Ասաց նաեւ, որ չգիտի, թե իրենց համայնքից քանի անձ է կալանավորված: Վախենո՞ւմ եք, անհանգի՞ստ եք, որ Ձեզ հետ էլ բան կպատահի, եթե խոսեք: «Չէ, ինչի՞ եմ վախենում, խի՞ եմ անհանգիստ, նստած՝ հաց եմ ուտում»,- ասաց նա:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԲՅՈՒՋԵԻՑ 195 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ ԵՆ ԾԱԽՍԵԼ՝ ՀԱՆՈՒՆ ՈՉՆՉԻ

Զրդեն երրորդ տարին անցկացվող «Երեւանյան երկխոսություն» միջազգային համաժողովի կազմակերպման վրա պետական բյուջեից ծախսվել է աստղաբաշխական գումար: Մասնավորապես, 31 մլն 251 հազար դրամ ծախսվել է կոնստրուկցիաներ, լույսեր ու ձայնային համակարգեր ձեռք բերելու համար, բեմահարթակի համար՝ 22 մլն 992 հազար դրամ, թարգմանչական համակարգերի ու թարգմանիչների ծառայության համար վճարվել է 4 մլն 131 հազար, իսկ նկարահանման լուսարձակների, եռաչափ միջանցքի ու օպերատորի ծառայության համար՝ 6 մլն 626 հազար դրամ:

Հայաստան ժամանած պատվիրակությունների անդամներին ընդհանուր 3 մլն 565 հազար դրամ արժողությամբ 310 նվերի տուփ է պատվիրել նախարարությունը, որի մեջ եղել են մեղր, թեյեր, չրեր: Գրիչների, թղթապանակների ու բլոկնոտների համար ծախսվել է 2 մլն 771 հազար դրամ: Ընդ որում՝ թղթապանակներն ու բլոկնոտները ձեռք են բերվել նույն տնտեսվարողից՝ «Անյուտա Մանուկյան ԱՁ»-ից, սակայն գնումը ձեւակերպվել է 3 առանձին պայմանագրով, որպեսզի յուրաքանչյուր պայմանագիր չգերազանցի 1 մլն դրամը եւ համապատասխանի մեկ անձից կատարվող գնման պահանջին:

Այսպիսով համաժողովի միայն կազմակերպչական մասի վրա ծախսվել է 71 մլն 336 հազար դրամ կամ 195 հազար դոլար: Սակայն համաժողովի անբաժան մասն է կազմել նաեւ հարյուրավոր հյուրերի գիշերակացը, ինչպես նաեւ՝ սնունդը: Թեեւ 2024 թվականից կազմակերպվում է այս համաժողովը, սակայն մինչ այժմ հանրությանը չի ներկայացվել որեւէ շոշափելի արդյունք՝ ոչ ներդրումային մեծ ծրագրերի, ոչ ստորագրված ռազմավարական համաձայնագրերի, ոչ էլ տարածաշրջանային քաղաքական բեկման տեսքով: Իշխանությունները համաժողովը ներկայացնում են որպես միջազգային դիվանագիտական հարթակ, սակայն երեք տարվա ընթացքում այն ավելի շատ մնացել է քննարկումների եւ ելույթների մակարդակում: Չկան հրապարակված տվյալներ, որ «Երեւանյան երկխոսությունը» Հայաստանին բերել է տնտեսական նկատելի արդյունք, նոր աշխատատեղեր, անվտանգության ոլորտում գործնական ձեռքբերումներ կամ Հայաստանի դիրքերի էական ուժեղացում:

Այս տարի համաժողովն անցկացվել է «Անցնելով փոթորիկների միջով» խորագրով եւ ունեցել է վեց հիմնական ուղղվածություն. «Աշխարհաքաղաքական բաժանումներից անդին», «Գլոբալ փոխկապակցվածություն», «ԵՄ ընդլայնում եւ եվրոպական ինտեգրում», «Ժողովրդավարական դիմակայունություն, հիբրիդային սպառնալիքներ եւ ԱԲ», «Կանաչ փոխակերպում», «Տեխնոլոգիաներ եւ անվտանգության ճարտարապետություն»: ԱԳՆ-ն հայտարարում էր, որ համաժողովը պետք է դառնա միջազգային երկխոսության կարեւոր հարթակ, որտեղ քննարկվելու են աշխարհաքաղաքական փոփոխությունները, անվտանգության համակարգերը եւ նոր համագործակցության ուղիները: Սակայն մինչ օրս չի հրապարակվել հաշվետվություն, թե նախորդ երկու համաժողովների արդյունքում կոնկրետ ինչ է ստացել Հայաստանը: Չկան նաեւ հանրային տվյալներ, որ այս միջոցառման արդյունքում Հայաստան են բերվել խոշոր ներդրումներ, բացվել նոր տնտեսական նախագծեր կամ լուծվել արտաքին քաղաքական որեւէ առանցքային խնդիր: Այս ֆոնին շուրջ 200 հազար դոլար ծախսելը հարց է առաջացնում՝ արդյո՞ք պետական միջոցներով կազմակերպվող այս համաժողովն իրական արդյունավետություն ունի, թե՞ մնացել է բարձր մակարդակի, բայց հիմնականում խորհրդանշական միջոցառման շրջանակում: Իսկ կենցաղային լեզվով ասած՝ ոմանք «փող են լվանում»՝ անհասկանալի մի գործընթացի վրա ծախսելով հանրային միջոցները:

Նյութերը՝ Արմինե ՆԱՎՈՅԱՆԻ

ԵՍ ԴԵՌ 2021-ԻՆ ԳՐԱՎՈՐ ԴԻՄԵԼ ԷԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵԲՈՒՅԺՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ

ԿԱՐԾԻՔ

«Հրապարակի» զրուցակիցը նկարչուհի, Հայաստանի նկարիչների միության անդամ Զարուհի Մուրադյանն է:

- Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի մեկնարկին սրտիկներ էր ցույց տալիս, ամեն առավոտ սեր էր բացատրում ժողովրդին, փորձում էր տպավորություն ստեղծել, թե իր քարոզարշավը բարի նոտայի վրա է: Սկզբում խոսում էր դպրոցներ, մանկապարտեզներ կառուցելու մասին, խաղաղություն բերելու մասին, սակայն վերջին օրերին մոռացել է այդ ամենը. սեր եւ հանդուրժողականություն խոստացող վարչապետն անցել է խիստ ագրեսիվ քարոզչության, իր ընդդիմախոսների ու մրցակիցների հասցեին վիրավորանքներ է տեղում, սպառնալիքներ, անեծքներ, չարություն: Ոչ մի խոսք զերիների մասին, ոչ մի արձագանք Ադրբեջանից հնչող սպառնալիքներին, առհասարակ՝ այն օրակարգային թեմաներին, որոնք իրապես հուզում են ՀՀ քաղաքացուն: Ի՞նչ գնահատական կտաք այս պրոցեսներին:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Արցախցի Արտուր Օսիպյանին հարցնում է. «Ինչո՞ւ ես կենդանի»: Նախ՝ այդ «կենդանի» բառի կիրառումն է սխալ: Մարդուն չպետք է ասես՝ «ինչո՞ւ ես կենդանի», այլ՝ «ինչո՞ւ չես մահացել» եւ այլն: Ինչ վերաբերում է բուն այդ արտահայտությանը, ապա դա քրեական հանցագործություն է: Չի կարելի նման հայտարարություններ անել: Փաշինյանը հերթական անգամ փորձում է արցախցիների հանդեպ ատելություն գրգռել: Ես Արտուրին անձամբ ճանաչում եմ, մարդը մոտեցել էր, ընդամենը խնդիրների մասին էր խոսում, թվարկում էր դրանք: Նա մշտապես պայքարել է տեղի օլիգարխիայի եւ այլ այլանդակ դրսեւորումների դեմ: Նա Արցախում բանտարկված է եղել, սակայն մասնակցել է բոլոր պատերազմներին: Նման մարդկանց հետ այդպես խոսելը՝ ես չգիտեմ, թե ինչ ժանրից է: Կամ այս մարդը ներկայանում է որպես հոգեխանգարված, կամ իսկապես հոգեխանգարված է: Նրան պետք է գնահատական տան հոգեբույժները եւ հոգեբանները: 2021 թվականին, երբ այս մարդը, հոգեխանգարվածի նման, մուրճը ձեռքին՝ փողոցներն էր ընկել, ես գրավոր դիմեցի Հայաստանի հոգեբույժների ասոցիացիային: Այս մարդն արդեն որերորդ անգամ հավակնում է երկրի ղեկավար դառնալ: Նրան անպայման պետք է հետազոտության ենթարկել եւ պարզել, թե ինչ հոգեկան խնդիրներ ունի: Ասոցիացիան որեւէ ձեւով չարձագանքեց իմ նամակին, սակայն այսօր առավել, քան երբեւէ, իրավիճակը լուրջ է: Նա այս պահվածքով քրեական հոդվածներ է շալակում միայն: Խտրականություն, ֆաշիստական ելույթներ, խուլիգանություն՝ կանանց ձեռքերից քաշքշել, եւ այսպես շարունակ: Մի արցախցի երեխա օրեր առաջ, արցունքն աչքերին, խոսում էր իր հայրենիքի՝ Շուշիի կորստի մասին. նորմալ մարդը առնվազն այդ երեխային կգրկեր, կշոյեր նրա գլուխը, բայց ես խոսում եմ նորմալ մարդու մասին, իսկ այս աննորմալն ասաց. «Լավ, լավ, լավ», եւ գնաց մի կիսախելագար կնոջ հետ նկարվելու: Ես այդ երեխայի արցունքները տեսնելիս ուղղակի սկսեցի լաց լինել: Այդ աղջնակի ձայնը մինչեւ հիմա ականջներիս մեջ է: Նիկոլի նման անհավասարակշիռ մարդուն պետք է իզոլացնել հասարակությունից:

- Երբ բժիշկ Վահե Ավետյանը «Հարսնաքար» ռեստորանում սպանվեց, քաղհասարակության ներկայացուցիչները փողոցում էին քնում՝ «Հարսնաքար» տանող ճանապարհին: Այժմ պաստառ պոկելու համար մարդ է ինքնասպան լինում, եւ զրո արձագանք: Ինչո՞ւ:

- Քաղհասարակության մեջ հիմա ովքե՞ր են մտնում, Բաքու գնացողները մտնո՞ւմ են: Վահե Ավետյանի համար ես էլ էի պայքարում, իմ կողքին էին Տիգրան Խզմալյանը, Արեգ Գեւորգյանը, Զառա Հովհաննիսյանը: Այն ժամանակ պայքարող մարդկանց մի մասն այժմ դարձել է կառավարության անդամ, իրենց ձեռնտու չէ այս ամենի մասին լսել եւ տեսնել, իսկ մյուսները կամ նիկոլական են այսօր, կամ երեւի գրանտներ չեն ստանում: Ի՞նչ էր արել այդ մարդը. պաստառ էր պոկել, այն էլ՝ այդ անշնորհք մեծ չափերի պաստառը: Ես էլ եմ դուրս գալու՝ պաստառներ պոկեմ, ու ի՞նչ: Ինձ ի՞լ են տանելու հոգեբուժարան: 100 մետրանոց այդ պաստառն ո՞վ է թույլ տվել, որ կպցնեն այս ու այն կողմ ու թուրքերի սիրած նշանն էլ որպես սիմվոլ օգտագործեն: Ավանեսյան Անահիտի մասնակցությամբ կադրերն եմ նայում եւ զարմանում՝ ինչպե՞ս կարող է կին նախարարն այդպիսին լինել: Իր աչքի առաջ անհետ կորածի քրոջն են քաշքշում, ինքը, փոխանակ կանխի այդ ամենը, գլուխն է թափահարում: Գայանե Աբրահամյանին օրեր առաջ գրեցի՝ հավաքվեք ձեր թիմով, որ ամեն ամիս գնում եք Եվրոպա սեմինարների, իբր թե Եվրոպա եք մտնում, գոնե գնացեք կանգնեք դրա կողքին, որ նման բաներ է անում, գոնե զսպեք դրան: Իմ գրածը լրիվ շրջեց հակառակ ուղղությամբ: Դե իհարկե, Գայանե Աբրահամյանի դուստրը դարձել է Համահայկական հիմնադրամի տնօրենը, նա կաշկանդված է, չի կարող քննադատել Նիկոլին, բայց ցավում եմ, որ Գայանեի ամուսինն իմ լավ կոլեգան է, որին շատ հարգում եմ: Գուցե հարց առաջանա, թե ինչու եմ հենց Գայանեին անդրադառնում. որովհետեւ նա հանրային մարդ է, պատգամավոր է եղել, հիմա էլ իրեն հանրային դեմք է համարում եւ անդադար խոսում է իր «խիստ զբաղվածության» մասին, որ ինքը գնաց Ֆրանսիա, գնաց Իտալիա, գնաց չգիտեմ ուր: Անպտուղ գործուղումների թող չգնան, գումարներ չմսխեն: Մենք ո՛չ Եվրոպա ենք գնում, ո՛չ էլ այժմ ճանապարհին ենք: Իսկ Եվրոպան լռում է, որովհետեւ այս խամաճիկը նաեւ ձեռնտու է իրենց: Նիկոլը Ռոբերտ Քոչարյանից շատ է այցելել Ռուսաստան: Թող փորփրեն տեսնեն՝ իրենց Նիկոլը քանի երկրի գործակալ է:

ՊՍԻԽՈՊԱՏԻԱ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ ՇԱՏ ՍԱՌՆԱՍԻՐՏ ԵՆ ԵՎ ՉՈՒՆԵՆ ՄԵՂՔԻ ԶԳԱՑՈՒՄ

«Հրապարակի» զրուցակիցը հոգեբան Աննա Մանուկյանն է:

- Երբեմն մարդկանց անառողջ վարքագիծը թույլ է տալիս կարծելու, թե մեր դիմաց կանգնած մարդը պսիխոպատիայով է տառապում կամ՝ շիզոֆրենիայով, սակայն սովորական մարդիկ դա չեն կարողանում տարբերել: Որպես հոգեբան, ինչպե՞ս եք տարբերում՝ անձը հոգեկան առողջության խնդիրներ ունի՞, թե՝ ոչ, եթե ունի, ապա ինչպիսի՞, եւ խնդիրը դեռ հոգեբանների՞ տիրույթում է, թե՞ արդեն հոգեբույժների:

- Առհասարակ, նման դիագնոզներ տալու իրավունք ունեն բացառապես բուժող բժիշկները՝ հստակ հետազոտություններ կատարելուց հետո: Պետք է անպայման անձին հետազոտել, որից հետո նոր միայն ասել, թե ինչ հոգեկան խնդիրներ ունի նա: Երբ մենք մարդուն ասում ենք շիզոֆրենիկ կամ պսիխոպատ, առաջին հերթին վիրավորում ենք այն մարդկանց, ովքեր տառապում են նման խնդիրներով: Շիզոֆրենիան բավականին ծանր հիվանդություն է, որն առաջին հերթին կապված է իրականությունն ընկալելու հետ: Նման մարդիկ տեսիլքներ են ունենում, զառանցում են շատ հաճախ, նրանց մոտ կարող են նկատվել հուզական խանգարումներ եւ այլն: «Շիզոֆրենիա» բառը չի կարելի օգտագործել որպես վիրավորանք, հատկապես՝ որպես քաղաքական պիտակ: Ինչ վերաբերում է պսիխոպատիային, ապա այն եւս շատ հաճախ հանդիպող խնդիր է: Այն անձի հակասոցիալական խանգարում է: Այստեղ եւս կա իրականության կապը կորցնելու խնդիր: Պսիխոպատիայի ժամանակ անձը կորցնում է էմպատիայի զգացումը, որը համադրվում է հուզականության դեֆիցիտի, ինչպես նաեւ՝ մարդկանց մանիպուլացնելու հետ: Նման մարդիկ շատ սառնասիրտ են եւ չունեն մեղքի զգացում:

- Նիկոլ Փաշինյանը սկսել է ագրեսիվ վարքագիծ ցուցաբերել, եւ տպավորություն է, որ նա հոգեկան առողջության հետ կապված որոշակի խնդիրներ ունի: Նա սպառնում է մարդկանց «սատկացնել», տարօրինակ մեղադրանքներ է ներկայացնում ընդդիմադիր ուժերին, անիծում է մարդկանց: Սրանք ի՞նչ դրսեւորումներ են:

- Այս ամենն առաջին հերթին վկայում է միջավայրի հուզական լարվածության մասին: Ընդհանրապես, երբ վիրավորական խոսքերի առատություն է նկատվում, միջավայրում առաջանում են հուզական լարվածություն եւ տագնապ: Քաղաքական խոսքը պետք է լինի կշռադատված, պրոֆեսիոնալ եւ, որ ամենակարեւորն է՝ մարդկային: Սխալ է ասելը, որ քաղաքականության մեջ, այն էլ՝ ընտրություններից առաջ, վեճեր հարկավոր չեն, բայց եթե դիսկուրսը կառուցողական չէ, եթե վիրավորանքների տեղատարափ է սկսվում, եթե անձնական վիրավորանքները գերակշռում են, այստեղ կա խնդիր: Մենք ունենք ազգային տագնապներ, մեր հասարակությունն ընդհանուր հուզական լարվածության մեջ է հայտնվել, եւ դա գալիս է ատելության խոսքի առատությունից: Հետեւելով քաղաքական պրոցեսներին՝ ես կարծում եմ, որ շատերը քաղաքական գիտելիքի պակաս ունեն: Հայ ժողովուրդն այնպիսի մեկի կարիքն է զգում, որը կլուսավորի խավարը, կտա անպատասխան հարցերի պատասխանները, եւ հենց այս փնտրտուքի արդյունքում է, որ լարվածությունն օրեցօր մեր կյանքում մեծանում է: Այո, մեր միջավայրն այժմ ագրեսիվ է, բայց մարդիկ չեն ուզում ագրեսիա: Մարդիկ ամենուր մեղավորներ են փնտրում, որովհետեւ երկրում բավականին բարդ մթնոլորտ է: Մեր ժողովուրդը կարիք ունի գտնել մեկին, որը կհասկանա իրեն, ցույց կտա ելքեր ու ճանապարհ: Ըստ իս՝ հասարակության մոտ նկատվում է բարձր տագնապայնություն, բեւեռացում եւ հուզական գերլարվածություն: Առկա է նաեւ կոլեկտիվ տագնապային վիճակ, որը բնավ մեկ անձով պայմանավորված չէ: Նման դեպքերում միջավայրը կիսվում է երկու մասի՝ մերոնքական եւ ձերոնքական: Այն ինֆորմացիան, որը ստանում է հայ ժողովուրդը, բավականին շատ է: Այն ծանրաբեռնում է մարդու ուղեղը՝ մարդուն դարձնելով առավել տագնապային: Ես՝ որպես հոգեբան, չեմ կարող հեռավար կերպով որեւէ քաղաքական ուժի ախտորոշել:

ՇԱՐԺՈՒՄ

ՄԵԶ ՀԵՏԻՆ ԹՎՈՎ ՎՏԱՐՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻՑ

Նիկոլ Փաշինյանը եթե ոչ մեկին չի կզզացնում, չի սատկացնում ու այլ սպառնալիքներ չի տեղում, չի գոռում, թե՝ «ինչու ես դու կենդանի, ինչու չես զոհվել խրամատում», ապա դա չի նշանակում, որ մեր օրը հանգիստ ու անհոգ է անցնում: Նա գոռգոռոցից ազատ օրերին ավելի վատ բան է անում... վտարում է հային հայկական լեռնաշխարհից ու, առաջ տանելով ադրբեջանական երազանքները, պնդում, թե հայն այստեղ մենակ չի եղել, եղել է թաթարների ու մոնղոլների հետ, եկել են, գնացել, գաղթել, խառնվել: Մեջբերում եմ Սպիտակում նրա նախընտրական ելույթից. «...Պատկերացնո՞ւմ եք, Բագրատունյաց թագավորության անկումից հետո այսօրվա մեր Հայաստանի տարածքում հայկական պետություն չի եղել, մոնղոլ-թաթարներ են եղել, եկել են, գնացել են, գաղթել են, խառնվել են, մենք ենք գաղթել եւ այլն, եւ այլն: Բայց այս տարածքում եղել են պետություններ, այս տարածքում երբեք չի եղել, որ ընդհանրապես ոչ մի պետություն գոյություն չունենա: Այստեղ եղել են պետություններ, բայց ոչ հայկական պետություններ: 1000 տարի, դուք պատկերացնո՞ւմ եք՝ դա ինչ է»: Ծղրտացել է Փաշինյանը, ու նրան լսել են տեղի բնակիչները եւ չեն խենթացել, որովհետեւ չեն հասկացել այդ բառերի տակ թաքնված իրական նպատակը, այդ ժպիտի, սրտիկի տակ թաքնված սրածայր յաթաղանը չեն նկատել:

Եվ, ուրեմն, այն միակ մարդը դու ես, որը կգոչի, թե այստեղ 1000 տարով հայկական պետություն չի եղել՝ որպես նախընտրական թեզ: Ադրբեջանն այստեղ գուցե ավելի՞ հին է եղել, գուցե մոնղոլ-թաթարնե՞րն են մեր նախահայրերը: Այն միակ հայը դու ես, որի համար Հայկ Նահապետի մահաբեր նետով Բելը չի սպանվել, դու ես այն միակ հայը, որ մեր պատմությունը, մեր պապերի իղձերը հեքիաթներ է դարձնում ու գրում է հայի նոր պատմությունը՝ դաժան օտարի աչքով՝ ամոթալի պատմություն, մոնղոլ-թաթարների հետ խառնված, պետության անարժան, գաղթած, եկած-գնացած-խառնված:

Իսկ ուրիշ պետություններն այստեղ եղել են, ո՞վ է հերքում: Թվում է, թե դա է իրականությունը, բայց ինչո՞ւ է եղել այդպես, եւ ո՞րն է պատմական արդարությունը՝ դա շրջանցում է «հզոր պատմաբան» վարչապետը, որը, համատեղության կարգով, կատարում է Ալիեւի երկրում դասավանդող պատմության ուսուցչի դերը՝ հային իր հողում դարձնելով եկվոր, խառնված, պատահական, թափառական մի խառնամբոխ, որը չի եղել աշխարհի այս հատվածի լիիրավ տերը: Նա իր մակերեսային գիտելիքներն ի մի բերելով՝ դրանցից դուրս է բերում թրքահաճո հետեւություններ, խեղաթյուրում պատմական իրողությունները եւ «դասավանդում» իր կողմնակիցներին՝ քարոզարշավի անվան տակ, ալիեւահաճո այս մտքերը դարձնում իրականություն ու կորզում անգրագետ հանրության ծափերն ու ողջույնները:

Սա ավելի ծանր է, քան հոգեվայտանքների սրացումները, գոռգոռոցներն ու սպառնալիքները: Դրանից հետո դժվար է լինելու նորից աշխարհին ապացուցել, որ մենք այստեղ ենք եղել միշտ ու եթե անգամ չենք ունեցել պետություն, մենք ենք այս տարածքի բնիկները, որոնք շարունակել են կյանքը հենց այստեղ, չնայած արյունարբու հարեւանների բոլոր վայրագություններին: Մեզ այստեղից փորձել են վտարել, հասել ենք անհասանելի լեռներին ու պատսպարվել, բայց պահպանել ենք մեր ինքնությունը՝ մեր հավատի ու մեր կազմակերպված Եկեղեցու շնորհիվ, ու ստեղծել ենք պետություն՝ մեր պապերի ու հայրերի նվիրական իղձերն իրականություն դարձնելով: Այդպես էր, քանի դեռ այդ մեկը՝ դու, չէր ասել, որ մենք այս սարերի տերը չենք: Այսօր Ալիեւը, որ եկել ասում է՝ այս սարն իմն է, այս ծառն իմն է, այս լիճն իմն է եւ ամեն բան այս տարածքում իմն է, ստացել է մի համախոհ կկու, որն իր հետ ձայնակցում է՝ քոնն է, բոլոր ձագերիս էլ տար քեզ ծառա: Եվ այդ մի հայը, որ ձայնակցում է, դու ես:

Եվ, ուրեմն, մենք ունենք ղեկավար, որը հետին թվով օգնում է թշնամուն՝ վտարել հային հայկական լեռնաշխարհից, ու թշնամուն տալիս քարտ-բլանշ՝ մեզ այս տարածքում եկվոր ու տնվոր կոչելու, տալիս է մեր քաղաքները, եկեղեցիները իրենցը կոչելու իրավունք: Իսկ մի՞թե ամեն երկրի ղեկավար չի պաշտպանում իրեն վստահված երկրի շահերը, ինչո՞վ է ձեռնտու հային՝ ունենալ այսպիսի ղեկավար:

Նախընտրական քարոզարշավի նպատակն է՝ ընտրողներին ներկայացնել առաջիկա 5 տարիների ծրագրերը, այն նպատակները, որոնք թեկնածուն նախատեսում է իրականացնել իր պաշտոնավարման ընթացքում: Ի՞նչ նպատակ է հետապնդում Նիկոլ Փաշինյանը՝ նման զառանցանքներ հանրայնացնելով, արդյոք սա ե՞ւս նպատակ է. ասել, որ երբեք Հայաստանը մոնոէթնիկ չի եղել, 90 տոկոս միայն հայկականությունը նորություն է այս տարածքում, ու պետության դարպասները բացել 300 հազար ադրբեջանցիների առջեւ: Այդպիսով, այս «ազնվագույն» մարդը հաստատում է պատմական արդարությունը ադրբեջանցիների համար, որը նրանք երազել անգամ չէին կարող: Սա նպատակ է եւ ծրագիր, որը նա ներկայացնում է ընտրողին, կորզում նրա հավանությունը եւ նաեւ հարմարեցնում այն մտքին, որ իրենք խառնված են, իրենց մեջ կա մոնղոլների ու թաթարների, թուրքերի ու ադրբեջանցիների, մյուս ազգերի արյուն, որոնք պետություն են ունեցել այս կողմերում: «Եկել են, գնացել են, գաղթել են, խառնվել են»,- ասում է վարչապետը, ու նրան լսելով կարելի է համաձայնել, որ, այո, ամենայն հավանականությամբ, ցավոք, նաեւ խառնվել են: Ու այդ խառնածինների մեջ այսօր արթնացել է այդ խառնված արյունը, որը ջուր չի դառնում, նորից ուզում են, որ այդ մոնղոլները գան, գնան, թաթարները ներգաղթեն ու անարգել խառնվեն... Իսկ ի՞նչ է ասում հայի արյունը...

Այս ելույթն անկեղծորեն ավելի մեծ ցավ է պատճառում, քանի որ ավելի մեծ վտանգ է գուժում, քան լուտանքներն ու սպառնալիքները: Չի կարելի նշանակություն չտալ, արհամարհել, անտեսել այս բառերի հրեշավոր ենթատեքստը, չգիտակցել, որ պատմական այդ վերլուծության հետեւանքներն անդառնալի վնաս են հասցնելու մեր ժողովրդին ու պետությանը: Այս վերլուծության հեղինակը եթե անգրագետ հանրության կողմից նորից առաջ մղվի որպես ղեկավար, կստացվի, որ ամբողջ հայ ժողովուրդը հազարամյա իր պատմությունը ջնջել, գլխիկոր կանգնել է մարդկության առջեւ՝ գաղթի խուրջինը ուսին, խառնված ու ամոթահար, որպես եկվոր, որ իրեն տեր էր կարծում, պարզվեց՝ տնվոր է, որը պիտի հեռանա ու իր հայրենիքը զիջի իսկական տերերին, որոնցից խլել է՝ հրեշավոր ահաբեկչությամբ ու ագրեսիայով: Ուզո՞ւմ ենք, որ այդպես լինի, արդյոք ամբողջովին ջո՞ւր է դարձել հայի արյունը՝ այսօր, ցավոք, հայտնի չէ, բայց հայտնի կդառնա հունիսի 7-ին:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ԱՈՒԳՈՒՍՏՈ ՊԻՆՈՉԵՏԸ ԵՎ ՀԵՌԱՑՈՂ ՓԱՇԻՆՅԱՆԸ

Փաշինյանը պատկանում է այն գործիչների «պլեադային», որոնք հեռանալուց հետո այլեւս չեն վերադառնում: Կամ մոռացվում են, կամ ինֆարկտահար լինում, կամ փտում բանտերում: Կարող եմ անուններ տալ՝ Բենիտո Մուսոլինի, Ադոլֆ Հիտլեր, Աուգուստո Պինոչետ, Նիկոլայե Չաուշեսկու, Աբուլֆազ Էլչիբեյ, Միխեիլ Սահակաշվիլի... Սա ամբողջական ցանկը չէ: Ոմանք ավելի էկզոտիկ վերջաբան են ունենում: Օրինակ՝ Նիկոլաս Մադուրոն, Փաշինյանի ադաշը: Թրամփը ներխուժեց Մադուրոյի ննջարան, նրան իր կնոջ հետ հավաքեց ու տարավ: Վերջ: Տեսնելով Փաշինյանի վերջին օրերի պահվածքը, որոշակի նմանություններ եմ նկատել նրա եւ անփառունակ վախճան արձանագրած գործիչների միջեւ: Ցավում եմ նրա համար, բայց ոչնչով օգնել չեմ կարող:

Ամենահետաքրքիրը Պինոչետի պատմությունն է: Նա Չիլիում իշխանության գլուխ է եկել 1973-ի հեղաշրջման արդյունքում՝ ԱՄՆ ամենաակտիվ աջակցությամբ տապալելով նախագահ Սալվադոր Ալյենդեի կառավարությունը: Իսկ նախագահի աթոռը կորցրել է հանրաքվեի արդյունքում: Ընտրողների 55%-ը մերժել էր նրան: Ընդունել է ընտրությունների արդյունքները՝ գնահատելով որպես «չիլիացիների սխալ»: Իշխանազրկումից հետո նրա կյանքն անցել է միջազգային քրեական հետապնդումների մեջ: Մահացել է 2006 թ. դեկտեմբերի 10-ին՝ ինֆարկտից: Պետական հուղարկավորություն եւ սուգ չեն հայտարարվել: Մահվան հաջորդ օրը Սանտյագոյում տեղի է ունեցել բազմամարդ հավաք, որտեղ ելույթներ են ունեցել ընդդեմ Պինոչետի, իսկ քաղաքի մյուս մասերում տեղի են ունեցել Պինոչետի կողմնակիցների՝ բազմամարդ սգո հավաքներ:

Ես արդեն ասել եմ, որ հունիսի 8-ին Փաշինյանն այլեւս չի լինելու: Նկատի ունեմ՝ այլեւս վարչապետ չի լինելու: Կընդունի ընտրությունների արդյունքները, թե չի ընդունի՝ իր գործն է, միայն թե քաջություն ունենա նամուսով, ինչպես Պինոչետը, հեռանալ կառավարության շենքից:

Ինձ շատ է մտահոգում Փաշինյանի վերջին օրերի պահվածքը: Այդ մարդը, իմ հասկանալով, ինչ-որ բանից վախենում է: Այլապես ինչի՞ մասին են վկայում նրա խոսքում ի հայտ եկած քրեական ենթամշակույթը, խելագարին հատուկ բռնկումները, քաղաքացիներին (կին թե տղամարդ) քաշքշելու հակումները, աջուձախ բոլորին «կզզըցնելու» սպառնալիքները: «Միմինո» ֆիլմում դատավորն ամբաստանյալին հարցնում է. «Դուք ներխուժել եք անծանոթ քաղաքացու բնակարան, ցենզուրայից դուրս արտահայտություններ թույլ տվել, մինչեւ զուգարան աթոռով հետապնդել այդ քաղաքացուն, կոտրել թանկարժեք ջահը եւ ասում եք՝ որեւէ պատճառ չե՞ք ունեցել: Ես ինչպե՞ս հավատամ Ձեզ»: Պարոն Փաշինյան, դու հիմա ի՞նչ ես ուզում մեզնից, ինչո՞ւ ես բարձրախոսով աջուձախ հայհոյում, «գողականի» կերպարի մեջ մտել՝ քաշքշում ես, սպառնում «կզզըցնել»: Ո՞չ կին ես հաշվի առնում, ո՞չ տղամարդ, ո՞չ ծեր, ո՞չ մանուկ: Այս բռիությունը մի պատճառ պետք է ունենա՞, թե՞ դիմենք համապատասխան մասնագետներին, որ քեզ, որպես վտանգավոր էլեմենտի, մեկուսացնեն հասարակությունից: Եղբայր, եթե մենք դեռ ինչ-որ բաներ չգիտենք քո մասին, կանգնիր՝ պարզ խոսենք, հասկանանք իրար: Բորբոքվում ես, քեզ ուտում, որ ի՞նչ: «Արցախ» բառը լսած՝ պայթում ես, ինչո՞ւ: Ո՞վ չգիտի, որ դու միտումնավոր (գիտակցված) հանձնել ես Արցախը, որ Հայաստանին անկախություն բերես: Դե հիմա՝ չի ստացվել: Արցախը տվել ենք, անկախություն էլ չենք ստացել՝ քեզ կախելո՞ւ ենք դրա համար: Ավելի լավ չի՞ լինի, որ մեր հասցեին լուտանքներ շաղ տալու փոխարեն նստես, մի նոր մանիպուլյացիա մտածես այն մասին, թե ինչու Արցախը տալուց հետո ո՞չ խաղաղություն եղավ, ո՞չ անկախություն: Զոհերի ու անհետ կորածների մասին հիշեցնում ենք, ասում ես՝ ես կապ չունեմ, Հայաստանի օկուպացված տարածքների մասին ենք հիշեցնում՝ լաչառանում ես, կրծմրծած քարտեզդ նետում ենք աղբաման՝ քեզ ուտում ես, հարցնում ենք՝ ի՞լ ինչ տարածքներ ես հանձնելու՝ դիվոտում ես, հարցնում ենք՝ ո՞ւմ գրպաններում են պարտակվել 2019թ. Արցախին հատկացված փողերը, այլայլվում ես, Եկեղեցու դեմ արշավդ ենք հիշեցնում՝ սատանա է մտնում մեջդ, ասում ենք՝ բռնապետ ես, քեզ լրիվ կորցնում ես: Ուրեմն մի պատճառ կա, չէ՞, որ քեզ այսպես ես պահում: Հայաստանի վարչապետը կարո՞ղ էր այս ամենի հետ կապ չունենալ: Իհարկե՝ ոչ: Եվ, ուրեմն, բարի եղիր՝ նախ ընդունել քո վարչապետության տարիների այս բոլոր ախմախությունները, եւ ապա՝ եթե ուրիշ բաներ էլ կան, որոնց մասին մենք չգիտենք, մարդավարի խոստովանիր: Ինչ է, մենք վրացիների չափ չկա՞մնք, որ, հրեն, Սահակաշվիլուն առոք-փառոք, որպես իրենց պատմության մի մասնիկ, որպես «պատմական արժեք», դեռ պահում են:

ՀԳ. *Գործնական առաջարկ՝ երկիրը ցնցումներից զերծ պահելու վճռականությամբ զինված ընդդիմությանը: Պարոնայք, հունիսի 5-ին Երեւանում պետք է կազմակերպվի ընդդիմության մեկ միլիոնանոց միասնական ցույց: Չիլիում այդպես ազատվեցին Պինոչետի կառավարական խունտայից:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՀԱՄԱԿԱՐԳ

ՍԱ ՊԵՏՊԱՏՎԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է, ՈՉ ԹԵ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի տվյալներով, համակարգի ներդրումից ի վեր, այսինքն՝ 100 օրում, իրականացվել է 68 հազար վիրահատություն: Սրանք այն միջամտություններն են, որոնց մասին Նիկոլ Փաշինյանը հիշատակում է իր բոլոր նախընտրական հանդիպումների ժամանակ: Իրո՞ք այդքան վիրահատություն է արվել 3 ամսում, ո՞ր մասն է անվճար, եւ արդյո՞ք սա միայն Նիկոլ Փաշինյանի կառավարման «հմայքներից» է: Հարցերն ուղղեցինք առողջապահության ոլորտի փորձագետ, Պետական առողջապահական գործակալության նախկին ղեկավար **Ծաղիկ Վարդանյանին**, որը դեմ է, որ գործընթացն անվանենք առողջապահության ապահովագրություն: «Ապահովագրությունն ունի մի շատ կարեւոր հատկանիշ՝ շեշտը դնում է պրոֆիլակտիկ բուժզննությունների եւ հետազոտությունների վրա, որպեսզի մարդիկ քիչ դիմեն հիվանդանոց: Գովաբանել, թե՝ տեսեք, ինչքան շատ ենք վիրահատում, տեսեք, թե ինչ լավ է, ամենեւին էլ մասնագիտական մոտեցում չէ: Սա

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ընդամենը PR քայլ է, թմբկահարվող նախընտրական թեզ»,- ասում է նա:

- Նախկինում էլ ինչ-որ բաներ անվճար էին: Ինչո՞վ է տարբերվում Փաշինյանի՝ ապահովագրություն ասվածը:

- 2014 թվականին զինծառայողի ընտանիքի անդամները եւ նրանց հավասարեցված անձինք, կառավարության որոշմամբ, ներառվեցին նորագույն թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող բժշկական ծառայությունների շահառուների մեջ: Նրանք արդեն շատ վաղուց այդ բուժօգնությունը՝ ստենտավորումներ, տարբեր վիրահատություններ, ստանում են: Հետո մինչեւ 7 տարեկան երեխաների բուժօգնությունը՝ պետական պատվերով, փոխարինվեց մինչեւ 18 տարեկանների բուժօգնությամբ: Ու էլի գումարներ ավելացվեցին: Հետո առաջին եւ երկրորդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց համար նույն պրոցեսը կատարվեց: Հիմա եկել է մի իրավիճակ, որ ֆինանսական որոշակի միջոցներ են ներդրվել առողջապահությունում, ավելացվել է առողջապահության բյուջեն, եւ դրա արդյունքում 65+ քաղաքացիները նույնպես սկսել են բուժօգնությունից օգտվել: Իրականում, նրանց մոտ, իհարկե, բուժօգնության պահանջարկն ավելի մեծ է՝ տարիքով պայմանավորված: Բայց ինչքան էլ բարձր լինեն, ընդհանուր դիմելիությունը 10 տոկոսը չի անցնում, ըստ հետազոտությունների, եւ պետք է հասկանալ, որ առաջին մի քանի ամսում լինելու է 10 տոկոսին մոտ դիմելիության ցուցանիշ: Հետո աստիճանաբար նվազելու է, ինչպես եղավ զինծառայողների ընտանիքների, երեխաների վրա տարածելու ժամանակ: Բայց այսպես բարձրաձայնել, թմբկահարել, թե, գիտեք, մենք մի հրաշք բան ենք արել, մարդիկ եկան, վիրահատվեցին, շնորհակալ եղեք եւ այլն, երբեք չի եղել: Սա պետպատվերից օգտվող խմբերի ավելացում է, որը շարունակական պրոցես է: Պարզապես այս փուլում անունը դրել են ապահովագրություն: Նորագույն թանկարժեք տեխնոլոգիաները հանվել են, դարձել է ընդամենը ծառայությունների փաթեթ, դիզայներական փոփոխություններ են:

- Որքանո՞վ է ռեալ 100 օրում 68 հազար վիրահատությունը, սա արտառոց թիվ չէ՞:

- Դա զարմանալի բան չէ: Եթե ուսումնասիրենք անցյալ տարիները, ապա կտեսնենք, որ վիրահատական միջամտություններ ոչ պակաս թվով արվել են նաեւ մինչեւ այս փոփոխությունները: Ինչո՞ւ է շատ այս թիվը: Նախ՝ ունենք արտահիվանդանոցային բժշկական ծառայություն հիվանդանոցային պայմաններում, որտեղ հոդախախտը, կտրվածքը, կոտրվածքը, մի փոքր վիրաբուժական միջամտությունը համարվում են հիվանդանոցային ծառայություն: Սա գումարվում է ու մեծ թիվ է կազմում: Տարվա ընթացքում մեծ թիվ է դառնում: Երկրորդ. դրանք շատ են, որովհետեւ ապահովագրական ու մինչ այդ էլ պետպատվերի փաթեթներում հիմնականում վիրաբուժական միջամտություններ են ներառված, թերապեւտիկ բուժօգնությունը ներառված չէ: Այնպես որ, սրանք ճչացող թվեր չեն: Ամիսը ստացվում է առնվազն 12-13000: Եվ հետո՝ շահառուների թիվն է ավելացել: Ավելի արտառոց է այն, որ առանց ինֆրաստրուկտուրայի նախապատրաստման, առանց վերապատրաստումների, անգամ ապահովագրական հիմնադրամի մասնագետների պակասով, անգամ «Արմեդ»-ի այս վիճակով, որ իրենք չգիտեն, թե ինչ անեն, ինչ ձեւով է լինելու էլեկտրոնային համակարգը, անպատրաստ մտել են այս գործի մեջ միայն նրա համար, որ առաջին մի քանի ամսվա ընթացքում վիրահատություններ անեն, քարոզչական էֆեկտ ունենալով: Եթե այսպես էին անելու, այսքան անպատրաստ էին մտնելու, եթե ծառայությունների գները չէին փոխվելու, ընթացակարգերը չէին բարելավվելու, նույն «Արմեդ»-ի հավելվածն էր օգտագործվելու, ուրեմն մենք 22-ին էլ, 24-ին էլ, 25-ին էլ կարող էինք մտցնել իրենց ասած ապահովագրությունը: Արվել է 26-ի սկզբին, որովհետեւ հունիսին կան ԱԺ ընտրություններ: Հարցրեք ձեզ վստահող, ծանոթ բժիշկներին, բուժքույրերին, թե արդյոք պատրաստ էր համակարգը, արդյոք որակյա՞լ է բուժօգնությունը, արդյոք անվճա՞ր է ամենը, եւ կտեսնեք իրական վիճակը: ԲԿ-ներ կան, որ ասում են՝ մենք չունենք անվճար հիվանդասենյակ: Հիմա հարց՝ ապահովագրությամբ բուժվողները վճարում չե՞ն արել:

- Բայց եթե սա ապահովագրություն չէ, ապա ի՞նչ է:

- Ապահովագրությունն այսպես չի մտցվում: Ապահովագրության համար ինֆրաստրուկտուրան պատրաստ չէր, բուժկազմակերպություններում մի խայտառակ վիճակ է: Ծանրաբեռնվածությունը հասել է նրան, որ անորակ բուժօգնություն են մատուցում: Մեկ բժիշկը չի կարող 50 եւ ավելի այցեր սպասարկել, եւ այս բոլորի մեջ ստացվել է մի կծիկ, որտեղ կարեւորը նա է, որ մարդիկ գնում են վիրահատվեն: Ոչ, կարեւորը պետք է լինի նա, որ նախավիրահատական, հետվիրահատական ընթացքը ու շարունակական բուժումը ճիշտ կազմակերպվեն, եւ քաղաքացին արդյունքում պետք է լինի առողջ, որ ավելի որակյալ կյանք ապահովենք քաղաքացու համար: Ընդամենը գումար են ավելացրել: Միջնաժամկետ ծախսերի ծրագրով բազմիցս այս հաշվարկներն արվել են անցյալ տարիներին, ներկայացվել են կառավարություն, ԱԺ, մերժվել են՝ փող չլինելու պատճառով: Այս անգամ փողն ինչ-որ տեղից գտել են, վերցրել են պարտքեր, հենց հատկապես դրա համար Ասիական զարգացման բանկը եւ ՀԲ-ն տվել են մոտ 154 մլն դոլարի կարգի պարտքեր, վարկեր, ու այսպես՝ անպատրաստ վիճակում սկսել են իրականացնել՝ զուտ ելնելով նախընտրական շրջանում ներկայացնելու ու PR տրամաբանությունից:

- Այնպես են ներկայացնում, կարծես Փաշինյանն իր գրպանից է տալիս այդ գումարները: Մենք չե՞նք վճարում առողջության ապահովագրություն կոչվածի համար:

- Աշխատող քաղաքացիների վրա ավելացել է հարկ, պարտադիր վճար, ու եթե այս տարի ինչ-որ ձեւով այն սուբսիդավորվում է, հարցրեք ձեր սիրելի իշխող վարչակազմին՝ արդյոք հետո ի՞նչ է այդպես լինելու՝ 2027, 2028 թվականներին: Իհարկե՝ ոչ: Հիմա հատուկ բյուջեում գումար է դրվել, որը մյուս անգամ այդ տողով էլ չի դրվի:

- Ի՞նչ է պետք անել:

- Ավելի լուրջ է պետք վերաբերվել: Չկա ներդրված որեւէ մեխանիզմ, որ կարողանան մարդկանց ավելի առողջ պահել: Ընդամենը ծառայություններ են մտցրել ամենախոցելի խմբի համար՝ շնորհակալություն ակնկալելով: Սա ոչ թե ապահովագրական կամ առողջական, այլ նախընտրական ծրագիր է:

ԱՅՍ ՊԱՊԻԿՆ ԱԲԱՋՅԱՆԻ ՊԱՊԻԿԻ ՆՄԱՆ ԿԵՂԾ ՉԷՐ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցը **Տեր Վրթանես քահանա Բաղալյանն** է:

- Նիկոլ Փաշինյանը շարունակում է ատելության խոսք տարածել: Նա սպառնում է ընդդիմադիրներ «կզզըցնել», «բոմժ սարքել», ունեզրկել, բանտարկել, «սատկացնել»: Արցախցիներին անվանում է «թռածներ», մի արցախցի տղամարդու վրա բղավում էր՝ «դու ինչո՞ւ ես կենդանի մնացել, ինչո՞ւ չես զոհվել»: Ի՞նչ կարծիքի եք այս ամենի մասին:

- Քարոզարշավների ժամանակ ատելության խոսքը պետք է բացառել: Քարոզարշավը չպետք է այն մասին լինի, թե ով ում ինչքան է ատում: Այդ ատելության դրսեւորումներին մենք ականատես ենք 2018-ից ի վեր: Քարոզարշավին պետք է նախընտրական ծրագրեր ներկայացվեն, խոսեն կյանքի որակը բարելավելու մասին, խոստումներ տան հասարակությանը, մարդկանց պետք է իրենց առաջարկները ներկայացնեն եւ այլն: Բայց քանի որ Նիկոլ Փաշինյանն արդեն 8 տարուց ավելի է՝ իշխանության է, նա իր ոչ մի խոստմանը տեր չի եղել, ուստի պետք է քարոզարշավն իջեցնի փողոցային մակարդակի, պետք է մարդկանց անձնական վիրավորանքներ տա, մտնի մարդկանց ընտանիքներ, երեխաներին վիրավորի եւ այլն: Դե, իսկ իրավապահ համակարգը... տեսնում ենք, որ միայն ընդդիմադիր զանգվածի դեմ է աշխատում, իշխանությունները խոսում են ամենատգեղ բառապաշարով, սպառնում են, բայց այդ ամենը որեւէ իրավական հետեւանք չի ունենում, փոխարենը ինչ-որ մի ընդդիմադիր մի չնչին քննադատական խոսք է ասում, անմիջապես կալանավորում են: Մեր երկրում փաստացի կան արտոնյալներ, որոնց ամեն բան կարելի է՝ առանց բացառությունների, եւ կան իրավապահների կողմից հետապնդվող մարդիկ: Կարող են ինչ-որ մի քաղաքացու պաստառ պոկելու համար ձերբակալել, հետո այդ քաղաքացին անհասկանալի հանգամանքներում մահանա, եւ ասեն՝ ինքնասպան եղավ.... ո՞վ է մինչ այս պահը պատասխանատվության ենթարկվել ինքնասպան եղած քաղաքացու մահվան համար՝ ոչ ոք, իսկ դա նորմալ չէ: Օրեր առաջ էլ Ազատ գյուղում այրված տղաներից մեկի տարեց պապիկին էին քաշքշում, հետո վիրավորեցին: Նրանց թվացել էր, թե ինչպես Ռոբերտ Աբաջյանի պապիկն իրական չէր, այնպես էլ այս պապիկն է կեղծ, սակայն մեր երկրում՝ ամեն մի անկյունում, ամեն գյուղում ու քաղաքում այնքան խնդիրներ կան, որ դժգոհություն հայտնող բոլոր քաղաքացիներն իրական են եւ, վստահաբար, որեւէ կերպ ուղղորդված չեն: Փաշինյանն ամեն տեղ խնդիրներ է ստեղծել, դա իր համար խնդիր չէ, սակայն երբ դրանց մասին բարձրաձայնում են, խնդիր է:

- Փաշինյանը նաեւ Հայ առաքելական եկեղեցուն է սպառնում: Նախընտրական ծրագրում նշել է, որ Վեհափառին Վեհարանից հեռացնելու է եւ նոր կաթողիկոս նշանակի, հավանաբար՝ տիրադավներից մեկին....

- Միայն այն հանգամանքը, որ նա Եկեղեցու մասին այդպես է արտահայտվում, դա պետք է պատճառ լիներ, որ ԿԸՀ-ն չգրանցեր այդ կուսակցությանը: Հակասահմանադրական խոստումները հաշվի անելով՝ ԿԸՀ-ն շատ հանգիստ կարող էր այդ քայլին դիմել: Ամեն դեպքում, ես Փաշինյանի հայտարարություններին այնքան էլ լուրջ չեմ վերաբերվում, նա մի շարք խոստումներ է տվել, որոնք կյանքի չի կոչել: Բնականաբար, կոռեկտ չէ ատելություն ու թշնամանք տարածելը, հատկապես, երբ դա արվում է Եկեղեցու դեմ, սակայն մենք խոսում ենք մի մարդու մասին, որը զուրկ է ինքնատիրապետումից, չի կարողանում կառավարել իր հույզերը, չարությամբ է լցված եւ ամենուր միայն չարություն ու ատելություն է տարածում, պետք է ինչ-որ կերպ կանխել այդ ամենը:

ՀԱՅԱՑՔ

ՆՐԱՆՔ ԷԼ ՄԵԶ ՀԵՏ ԱՂԵՏԻ ԵԶՐԻՆ ԵՆ, ԲԱՅՑ ԴԵՌ ՉԵՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼ՝ Ո՞ՒՄ ԿՈՂՔԻՆ ԵՆ

Հրուցակիցս պատմաբան, մանկավարժ, երգիծական գրքերի հեղինակ **Ժորա Դալալոյանն** է: Նա նախ շնորհակալություն հայտնեց «Հրապարակ»-ին՝ թերթի նախորդ համարներից մեկում իր խոսքը հրապարակայնացնելու համար, եւ նշեց, որ 2 կարեւոր ասելիք ունի. «Երկար մտածեցի՝ արդյո՞ք իրավունք ունեմ թերթի էջերը երկրորդ անգամ զբաղեցնելու: Բայց երբ հասկացա, որ առաջիկայում հայ ժողովրդին սպասվում է կյանքի ու մահվան պայքար ոչ միայն օտար ասպատակողների, այլեւ ներքին թշնամիների դեմ, մի նոր «Սարդարապատ», վճռականություն ձեռք բերեցի՝ իմ մտահոգությունները մեր ժողովրդին փոխանցելու համար էլի դիմել թերթի օգնությանը: Այո, մեզ իրոք նոր Սարդարապատ է սպասվում: Ազգը վտանգի մեջ է: Եվ թվում է, թե ազգովի պայքարի կոչնակ պիտի հնչեցնեինք՝ դա ես չեմ տեսնում: Տեսնում եմ, որ կարող ուժերը նիրվանայի մեջ են: Ինձ ցավ է պատճառում այն, որ խոր լռություն են պահպանում մշակույթի, արվեստի մարդիկ, ստեղծագործական միությունները, ինտելիգենցիայի ներկայացուցիչները: Լսել եմ՝ Գրողների միությունը 500-ից ավելի անդամ ունի՝ գրողներ, բանաստեղծներ, գրականագետներ: Ճնշող մեծամասնությունը ոչ թե գրչի վարպետ է, այլ՝ «լռության ասպետ»: Նրանք էլ մեզ հետ աղետի եզրին են, բայց դեռ չեն կարողացել որոշել՝ ո՞ւմ կողքին են՝ տառապյալ մեր ժողովրդի՞, թե՞ թշվառական ու ժողովրդին թշվառության հասցրած իշխանությունների: Որոշ մշակութային գործիչներ սիրում են ասել. «Ես քաղաքականությամբ չեմ զբաղվում»: Բայց քաղաքականությունն է զբաղվում իրենցով: Ամեն օր: Ամեն ժամ: Նրանք չեն պաշտպանում բռնապետին, պարզապես թույլ են տալիս, որ բռնապետը գոյություն ունենա: Իսկ քաջնազարները չեն ծնվում դատարկ տեղում: Նրանք ծնվում են լռության մեջ, մեծանում են անտարբերության կաթով: Նրանց ուժը գալիս է ոչ թե իրենց խիզախությունից, այլ՝ ուրիշների վախից: Եվ հետո այդ նույն լուռ մարդը զարմանում է. «Բա ո՞նց եղավ, որ երկիրն էս վիճակին հասավ»: Ոնց եղա՞վ՝ քո լռությամբ եղավ, քո չգրված բառով, քո չկանգնած դիրքով: Դու գուցե ազնիվ ես: Բայց ազնվությունը եթե չի խոսում, դառնում է անօգուտ: Դառնում է բեռ: Դառնում է հող՝ ուրիշի իշխանության համար: Ես արհամարհում եմ վախկոտ մարդուն: Ոչ նրա համար, որ նա վախենում է, այլ՝ որովհետեւ նա հաշտվել է իր վախի հետ:

Այսօր մեր առջեւ ծառացած գլխավոր հարցը՝ շարժվել Նիկոլայի ցնդաբանություններով եւ երկիրը հանձնել հարեւան թշնամաբար տրամադրված երկրների «բարիկամեցողությա՞նը», թե՞պահպանել շուրջ 300-ամյա մեր բարիդրացիական հարաբերությունները հյուսիսային հարեւանի՝ ՌԴ-ի հետ: Ռուսների հետ ապրել ենք Հայրենական մեծ պատերազմ, ունեցել 100-ից ավելի հերոսներ, հաղթել ենք, կառուցել ենք, հասել աննախադեպ հաջողությունների: Ո՞ւմ հայտնի չէ, թե ինչ ենք տեսել Թուրքիայից, Ադրբեջանից՝ պատերազմներ, մահ, ավեր, շարունակական եղեռն: Ոմանք գտնում են, որ ռուսները դավաճանել են մեզ, չեն օգնել 44-օրյա պատերազմում: Որ ռուսները մեր փոխարեն պիտի կռվեին, գերագույն գլխավոր հրամանատար կոչված Նիկոլի ու մեր գեներալիտետի փոխարեն պիտի արդյունավետ մարտական գործողություններ կազմակերպեին ու ապահովեին մեր հաղթանակը: Ոչ, այդպես չի լինում: Եվ ահա, նեղանալով ռուսներից, այսօր մեզ փորձում են կտրել Ռուսաստանից, որտեղ ապրում են 2 մլն-ից ավելի հայեր, ովքեր աշխատում են այնտեղ՝ տուն ու հայրենիք պահում այստեղ: Իսկ «սրանք» բացում են հայրենիքի դարպասները՝ ժողովրդի հեռանալու, օտար ճամփաներ բռնելու համար: Շա՛տ անհիմն է այն կասկածը, որ այսօրվա իշխանությունների քաղաքականությունը նպաստելու է 300 հազար ադրբեջանցիների ներթափանցմանը եւ հայոց հողում տեղավորվելուն: Թուրքիայի վիլայե՞թ լինելն է մեր երազանքը, թե՞ Ադրբեջանի ծայրագավառ: Դա է մեզ սպասվողը ադրբեջանական թեզերով, մի՞թե ընտրարշավի ընթացքում շրջանառության մեջ չդրեց նոր հողեր նվիրաբերելու իր մտադրությունը:

Մեզ համար անհասկանալի է՝ երբ է դադարեցվելու այս սանձարձակ զազրախոսությունը, որը հորդում է ամբիոններից, փողոցներից, «քուչաներից», թափանցում հանրության գիտակցության մեջ: Նրան չե՞ն ամաչեցնում երկրի նվազող սահմանները, չի՞ սթափեցնում նախնիների հայացքը: Ժողովուրդը տեսնում է այս ամենը, բայց նա դեռ բազմած է գերագույն աթոռին ու խոսում է ոչ թե օրենքի, իմաստնության կամ պետական շահի լեզվով, այլ՝ ժարգոնով, հիստերիկ ռռնոցներով: Անպատվություն է լսել մեկին, որը պարտավոր էր լինել օրինակելի քաղաքացի եւ պետության դեմքը, բայց ձեռքն ընկած խոսափողից ճղճղում է «համբալների», «էշերի» ու «էշությունների» մասին, սպառնում է «պադվալները» լցնել:

Հայ ժողովուրդ, մի՞թե այս թշվառականն է քո բարձրագույն իշխանության պատկերը: Կարծում եմ՝ ոչ: Ոտքի ելիր: Ու միասնական գնա ընտրատեղամասեր, կատարիր քո ճիշտ ընտրությունը, «ոչ» ասա այս խայտառակ, ազգադավ իշխանություններին, ձայնդ տուր արժանավորներին: Ձայն չփոշիացնելու համար առաջարկում եմ ընտրել առաջատար 3-4 ուժերից որեւէ մեկին: Ես անձամբ հավատում եմ «Ուժեղ Հայաստանի» առաջնորդ Սամվել Կարապետյանին: Նա կարող է երկիրն անդունդի եզրից հանել եւ պարտավոր է դա անել»:



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՏՆՕՐԵՆԸ 9 ԱՄԻՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐԵԼ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻՑ՝ ՉԻ ԸՆԴՈՒՆԵԼ

Դիլիջանի բազմագործառութային քոլեջից մեզ են դիմել՝ խնդրելով չհրապարակել իրենց անունները, եւ մտահոգություն են հայտնել քոլեջի վիճակի հետ կապված: Վահագն Հովհաննիսյանը 2022թ.-ից աշխատել է որպես Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն: 2024 թ. հուլիսին Դիլիջանի պետական քոլեջը եւ Դիլիջանի բժշկական քոլեջը միավորել են, միավորված Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել ինքը՝ Վ. Հովհաննիսյանը: Միավորման գործընթացը բարդ է եղել, սակայն Հովհաննիսյանն այն իրականացրել է առանց բարդությունների. ոչ մի աշխատող չի կրճատվել, բողոքներ չեն եղել: Քոլեջների միավորումից հետո քոլեջի կառավարման խորհուրդը պետք է նիստ հրավիրեր, տնօրենի մրցույթ անցկացներ: Սակայն քոլեջի կառավարման խորհրդի նախագահ, Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը նիստ չի հրավիրել: Երկար ձգձգումներից հետո՝ 2025թ. հունվարին, քոլեջի կառավարման խորհուրդը նշանակել է քոլեջի տնօրենի ընտրություն, տնօրենի միակ թեկնածուն եղել է Վ. Հովհաննիսյանը: Սակայն մրցույթը չի կայացել, քանի որ լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի ներկայացել այդ օրը: Նախարարությունից հայտնել են, որ պատճառը ծանրաբեռնվածությունն է: Դրանից հետո պարբերաբար քոլեջի տնօրենի թափուր հաստիքի համար մրցույթներ են հայտարարվել, որոնք չեն կայացել՝ կրկին նախարարության ներկայացուցչի չներկայանալու պատճառով: ԿԳՄՍՆ-ն ամեն ինչ արել է, որ քվորում չլինի, մրցույթը չկայանա:

Վերջին 2 մրցույթներին մասնակցել է նաեւ Ռուզան Դավթյանը, որը վերջերս է ձեռք բերել տնօրենի թափուր տեղի մրցույթին մասնակցելու իրավունք վերապահող հավաստագիր: Ակնհայտ է, որ նախարարությունը ժամանակ է ձգել, որ վերջինս ստանա հավաստագիր եւ մասնակցի մրցույթին: Դիլիջանի քոլեջից մեզ հայտնեցին, որ դրսից որոշ ուժեր փորձել են ազդել քոլեջի կառավարման խորհրդի անդամների վրա, որպեսզի նրանք քվեարկեն Ռ. Դավթյանի օգտին, սակայն դա չի ստացվել: Դրանից հետո էլի ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի ներկայացել մրցույթներին: Քոլեջի աշխատակիցները կարծում են, որ Ռուզան Դավթյանին քոլեջի տնօրեն դարձնելու ձեռնարկին մասնակցել է Դիլիջանի համայնքապետի խորհրդական Նոնա Գրիգորյանը, որը կապեր ունի ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի հետ: Այդ ընթացքում Վ. Հովհաննիսյանը 9 ամիս շարունակ ընդունելություն է խնդրել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանից, սակայն ընդունելության չի արժանացել:

2025թ. հուլիսին նախարարի տեղակալ Ա. Սվաջյանն ընդունել է Վ. Հովհաննիսյանին, հայտնել, որ նրան քոլեջի տնօրենի թեկնածու չեն դիտարկում, քանի որ ներքին խողովակներով իմացել են, որ «Հովհաննիսյանը կրթության որակ չի ապահովում»: Եվ փոխնախարարը Վ. Հովհաննիսյանից պահանջել է ազատվել պաշտոնից, սակայն Հովհաննիսյանը դիմում չի գրել: Նա հասկացել է, թե որ «ներքին խողովակներն» են հովանավորել Ռուզան Դավթյանի թեկնածությունը եւ ինչու են իր կատարած աշխատանքի մասին սուտ տեղեկություններ հայտնել ԿԳՄՍ նախարարություն: Փոխնախարար Արաքսիա Սվաջյանը դժգոհ է մնացել, որ Վ. Հովհաննիսյանն ազատման դիմում չի գրել: 2025թ. սեպտեմբերի 11-ին Ա. Սվաջյանի գործավարուհին զանգահարել է Վ. Հովհաննիսյանին եւ հայտնել, որ հաջորդ օրը նախարարի տեղակալը սպասում է իրեն: Այդ հանդիպման ժամանակ Սվաջյանը Վ. Հովհաննիսյանից կրկին պահանջել է աշխատանքից ազատման դիմում գրել: Փոխնախարարը քոլեջի տնօրենի ԺՊ-ի հետ զրույցում չի հերքել, որ սատարում է Ռուզան Դավթյանի թեկնածությանը: 2025թ. նոյեմբերին Վ. Հովհաննիսյանը նամակ է ուղարկել վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որտեղ հայտնել է քոլեջում կատարվածի մասին եւ նշել. «ԿԳՄՍ նախարարը եւ տիկին Սվաջյանը քոլեջների միաձուլումից հետո երբեւէ չեն եղել քոլեջում, տեղում չեն հետեւել դասապրոցեսներին, չեն տեսել, թե ինչպիսի բարձր մակարդակով են ուսանողները հանձնում պետական ավարտական քննությունները, երբեւէ չեն հետաքրքրվել քոլեջի ճակատագրով, չեն տեսել, թե արդեն կրկնապատկված ուսանողությամբ եւ կրկնապատկված աշխատակազմով ինչպիսի վատթար պայմաններում ենք աշխատում. կոմունիկացիաները գտնվում են անմխիթար վիճակում, ջեռուցում չկա, մեծ ծախսեր պահանջող վերանորոգման խնդիրներ կան»:

Քոլեջի աշխատակիցները կարծում են, որ ԿԳՄՍ նախարարությունը 2 տարի օգտագործել է Վ. Հովհաննիսյանի ներուժը, որպեսզի միավորումից ձեւավորված քոլեջի աշխատանքը հունի մեջ ընկնի, ու դրանից հետո իրենց թեկնածու Ռ. Դավթյանին տնօրեն նշանակեն: 2026թ. ապրիլին Դիլիջանի բազմագործառութային քոլեջում ոչ պլանային տեսչական ստուգումներ են իրականացվել, ոչ էական խախտումների համար մայիսի 13-ին Վ. Հովհաննիսյանին պաշտոնից ազատել են: Տեսչության աշխատակիցը քոլեջում ասել է, որ նման փոքր խախտումների համար այլ քոլեջների տնօրեններին նույնիսկ նկատողություն չեն տալիս:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՐ ՈՒՂԻՆ ԿԸՆՏՐԵՆ. ՉԵՂԱՐԿԵԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Ռուսալեզու The insider էլեկտրոնային պարբերականի https://theins.ru-ի հրապարակումը կարելի է համարել արեւմտյան հատուկ ծառայությունների ուղեցույցը՝ փաշինյանական իշխանության ապագա գործողությունների համար: «Բռնեք «Մորուքին»: ԱԴԾ-ի, ԳՀՎ-ի եւ ԱՀԾ-ի ո՞ր գործակալներն են ուղարկվել Հայաստան՝ Փաշինյանի դեմ պայքարելու համար» վերնագրով հրապարակումը կարող է հիմք դառնալ Հայաստանում խորհրդարանական ընտրությունները տապալելու եւ երկրում բացարձակ բռնապետություն հաստատելու համար: Փաշինյանը եւ նրան կից գործող քարոզչական թիմը, այնպիսին, ինչպիսին «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանն է, արդեն այդ հրապարակումն ընդունել են որպես գործողությունների ճանապարհային քարտեզ:

Պարբերականի հոդվածն ակնհայտորեն ոչ թե լրագրողական հետաքննություն է, այլ արեւմտյան հատուկ ծառայությունների կողմից կազմված փաստաթուղթ, որի իսկությունն անհնար է պարզել, որքան էլ որ ոմանք պնդեն, թե դա բարեխիղճ կայք է, եւ խմբագիրը՝ Դոբրոխոտովը, իր հեղինակությունը բարձր է գնահատում: Հոդվածում նշված են Ռուսաստանի կողմից Հայաստան ուղարկված պաշտոնյաների եւ մարդկանց անուններ, ովքեր ՌԴ դեսպանատան կամ Հայաստանում գործող տարբեր ռուսական կազմակերպությունների աշխատակիցների անվան տակ աշխատում են ռուսական տարբեր հետախուզական ծառայությունների համար՝ նպատակ ունենալով առաջիկա ընտրություններում տապալել Փաշինյանի իշխանությունը, օգնել՝ իշխանության գալու իբրեւ թե Կրեմլի դրածոներ Սամվել Կարապետյանին եւ Գագիկ Ծառուկյանին: Հոդվածում Ռոբերտ Քոչարյանի մասին որեւէ հիշատակում չկա:

Պարբերականի հրապարակումից հետո Նիկոլ Փաշինյանը միանգամից այն ընդունեց որպես հաստատված փաստ եւ իր տեսաուղերձում հայտարարեց. «Միջազգային մամուլն անհերքելի փաստեր է հրապարակել, համաձայն որոնց՝ կալուգացի օլիգարխը ՌԴ անվտանգության ֆեդերալ ծառայության աշխատակից է»: Եթե Փաշինյանն իսկապես կարդացած լիներ հրապարակումը, ապա կիմանար, որ նույնիսկ հրապարակման հեղինակը նման միանշանակ պնդում չի անում, այլ ընդամենը հավանական է համարում, որ Կարապետյանը կարող էր գտնվել ԱԴԾ վերահսկողության տակ, իսկ դա ամենեւին չի նշանակում լինել գործակալ: Բացի դա, իրեն հարգող ցանկացած երկրի հատուկ ծառայություն կարող է վերահսկողության տակ վերցնել երկրի միլիարդատեր քաղաքացիներին եւ նրանց գործունեությունը: Փաշինյանին միանգամից ձայնակցեց նրա հաստիքային քարոզիչ Արամ Սարգսյանը, որ հայտարարեց, թե ԱԳՆ-ն պետք է անմիջապես արձագանքի հրապարակմանը. «Ռուսաստանի դեսպանատան քողի տակ գործող գործակալները պետք է ԱՆՀԱՊԱՂ լքեն Հայաստանը: Ինչ վերաբերում է Սամվել Կարապետյանին վերագրվող տվյալներին, ապա էական տարբերություն չկա՝ դու Պուտինի օլիգարխն ես, թե ՖՍԲ-ի գործակալ. կախվածությունը նույնն է»: Ստացվում է, որ մի հրապարակումը բավարար է, որպեսզի Ռուսաստանը հռչակվի թշնամի երկիր, այդ երկրի դեսպանատան եւ տարբեր կառույցների մեկ տասնյակի չափ աշխատակիցներ՝ արտաքսման ենթակա, իսկ Հայաստանի ընդդիմության առաջնորդը հռչակվի գործակալ: Ընդ որում, սա ասում է մի մարդ, որը, նախկին կյանքում լինելով ընդդիմադիր, հանդիպումներ է ունեցել Հայաստանում Ռուսաստանի հատուկ ծառայությունների աշխատանքը համակարգողի՝ ռեզիդենտի հետ եւ նրա հետ համաձայնեցրել իր գործողությունները՝ ինչպես ընտրությունների, այնպես էլ հետընտրական պրոցեսների ժամանակ:

Պատկերն ամբողջացրեց դեռեւս ԱԺ նախագահ աշխատող Ալեն Սիմոնյանը, որը մի թղթի կտոր հրապարակեց, ըստ որի՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակը գլխավորող Նարեկ Կարապետյանն իբրեւ թե ՌԴ քաղաքացիություն ունի: Կարապետյանն անմիջապես հերքեց այդ հորինվածքը, այդպիսի թղթի կտորներ կարող են պատրաստվել եւ հրապարակվել ցանկացած մարդու մասին, Հայաստանը փաստացի թեւակոխում է մի փուլ, որտեղ ով ում մասին ինչ ասես կարող է հորինել, ցանկացած կեղծիք կարելի է ներկայացնել որպես հաստատված իրողություն:

Այս ամբողջ օպերացիան՝ Ինսայդերի հրապարակումը, Ալեն Սիմոնյանի սարքած «փաստաթուղթը», Նիկոլ Փաշինյանի հրատապ արձագանքը, իրականում համակարգվում է մի կետից՝ Հայաստանի իշխանության արեւմտյան տերերի կողմից: Հայաստանում նրանց կենտրոնակայանը վարչապետի աշխատակազմ կոչվող կառույցն է: Հասկանալով, որ կարող են կորցնել վերահսկողությունը Հայաստանի նկատմամբ՝ գործող ռեժիմը կորցրել է հանրային վստահությունը, որ ընտրությունների միջոցով Փաշինյանին իշխանության պահելու բոլոր փորձերը ձախողված են, նրանք որոշել են հերթական անգամ դիմել իրենց սիրելի միջոցին՝ սահմանադրական կարգի տապալմանը, այն է՝ ընտրությունների փաստացի չեղարկմանը: Խոսքը քվեարկությունը չեղարկելու մասին չէ, այլ ընտրության մասնակից առնվազն մեկ կամ երկու ուժի ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկելու, նրանց լիդերներին չեզոքացնելու մասին է: Դատելով Ինսայդերի հրապարակումից՝ թիրախն «Ուժեղ Հայաստանը» եւ «Բարգավաճ Հայաստանն» են, որոնց հանրային աջակցությունն օրեցօր ավելանում է, չնայած իշխանության եւ նրա արեւմտյան տերերի կողմից գործադրվող անիմաստ ջանքերին: Ըստ մեր աղբյուրի, վարչապետի աշխատակազմ կոչվող կառույցում արդեն մի քանի օր է՝ ինտենսիվ աշխատանքներ են իրականացվում՝ սույն օպերացիան իրականացնելու, դրա ինֆորմացիոն ապահովումը կազմակերպելու համար, ինչը կարող է տեղի ունենալ առաջիկա օրերին՝մինչեւ այս շաբաթվա վերջը: Մեր աղբյուրը, հիմք ընդունելով Փաշինյանի հոգեվիճակը, անգամ հնարավոր է համարում Նարեկ Կարապետյանի կալանավորումը:

Իսկ ի՞նչ ընտրություն, երբ չկա ընտրության հնարավորություն:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 21.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

73 ԱԴՐԲԵՋԱՆՅԻ ՅՈՒՅՄՈՒՆՔ Է ՏՎԵԼ «ՍԽԱԼ» ԴԱՎԻԹ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԴԵՄ

Արցախի ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը Բաքվի բանտից հանդես էր եկել ուղերձով, որտեղ, խոսելով շինծու դատավարությունների մասին, հայտնել էր նաեւ, որ հարցաքննության ժամանակ ցույց են տվել ԼՂՀ ԱԺ նախկին պատգամավոր Դավիթ Գալստյանի նկարը եւ ասել, որ հայտնի մաֆիոզ է, զենք է վաճառում: Բաբայանի խոսքով՝ 73 վկա վկայություն է տվել նրա դեմ. «Հետո ես ասացի, որ Դավիթ Գալստյանը որեւէ կապ չունի զենքերի հետ, խառնվեցին իրար, գնացին, պարզվեց, որ խոսքը Պատրոն Դավիթի մասին է: Ես ասել եմ, որ դա ուրիշ Դավիթ Գալստյան է, գնացին, մի երկու ժամ հետո եկան ասեցին՝ փոխել ենք, կասեք՝ փրկել ենք Գալստյան Դավիթի կյանքը»: Սա խոսում է այդ քրեական վարույթի խայտառակ ընթացքի եւ կեղծիքների մասին, որոնք առկա են քրգործում, որով Արցախի ղեկավարությանը ցմահ ազատազրկումներ են տվել:

«Հրապարակ»-ի հետ զրույցում արցախցի պատգամավոր **Դավիթ Գալստյանը** հայտնեց, որ ծանոթ է Դավիթ Բաբայանի ուղերձին. «Մեր հայրենակիցները, ովքեր Ադրբեջանում պատանդ են, այնտեղից պայքարում են եւ փորձում են անգամ օգտակար լինել մեզ՝ բոլորիս: Բայց Դավիթ Բաբայանի ուղերձն այն մասին է, որ շինծու գործեր են կարում բոլոր հայերի վրա՝ Ադրբեջանի կողմից, սակայն Հայաստանի օրվա իշխանությունը որեւէ գործնական քայլի չի դիմում՝ այդ շինծու դատավարության դեմն առնելու համար: Եվ, ինչպես տեսնում եք, Հայաստանի օրվա իշխանությունը նույն ձեռագրով շարունակում է շինծու գործեր կարել մարդկանց վրա, ինչպես 18 արդարների, այնպես էլ ուրիշների մասով: Ցավալին այն է, որ մենք այսօր Հայաստանում չենք կարող օրենքով մեզ ապահով զգալ, քանի որ օրենքը գործում է մեկ մարդու կամքին համահունչ, այլ ոչ թե սահմանադրությանը կամ օրենսգրքին»:

Գալստյանը չբացառեց, որ իր դեմ այդ կեղծ՝ 73 ցուցմունքի պարագայում հետագայում կարող է ինքը երկրից դուրս կամ, ինչու չէ՝ նաեւ Հայաստանի ներսում թիրախավորվել. «Իհարկե, կա այդ մտավախությունը, բայց այսօր քանի որ օրվա իշխանությունները զբաղված են իրենց իշխանական աթոռները պահելով, ՀՀ քաղաքացիները, այդ թվում մենք՝ բռնի տեղահանվածներս, պաշտպանություն չենք տեսնում օրվա իշխանության կողմից: Այդ հարցին առայսօր որեւէ կերպ պետական պատկան մարմիններից չեն արձագանքել, եւ չի բացառվում, որ ՀՀ սահմանից դուրս խնդիրներ ունենամ»:

Հարցին՝ պատրաստվո՞ւմ է այս հարցով դիմել միջազգային իրավապաշտպան կառույցներին, Գալստյանն արձագանքեց. «Ցավոք, ես այսօր չեմ կարող ՀՀ տարածքը լքել, քանի որ ՀՀ իշխանությունների կողմից իմ ՍԷԿՏ-ը փակ է, երբ որ Հայաստանում վերջ կդրվի իմ նկատմամբ ապօրինի քրեական հետապնդումներին, իհարկե, այդ ժամանակ արդեն իսկ ես կփորձեմ հասկանալ՝ եթե իշխանությունը որեւէ քայլ չի անելու, ես անձնապես՝ իմ հնարավորություններով կփորձեմ ճշտել, թե ինչ կարող եմ անել: Հատկապես իմ դեպքում այլ մարդու նկար են դնում եւ այնպիսի գործերի մասին են խոսում, որն իրականության հետ կապ չունի»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am